

**Հայերէն բաժնի**

- Խմբագրական.....1
- Լրատական.....2-5
- Յարցազրոյց.....6-7
- Վերապրողների յուշեր.....8
- Վերջին տասնամեակում ՀՀ առաքւած.....9
- Սևրի դաշնագիրը.....10-11
- Թեհրանի հայմայնքի պատմութիւնից.....12
- Արտագ-Մակու գաւառը և .....13
- Յարութիւն Աւագ քհանայ Տէր Մեսրոպեան.14
- Նոր ուղղագրութեան կանոնները.....15
- Մանկական էջ.....16
- Առողջապահական.....17
- 2001 թւականի իրադարձութիւնները.....18-19
- Մարզական.....20
- Ժամանց.....21
- Երիտասարդի համար.....22

**Պարսկերէն բաժնի**

- Խմբագրական.....1
- Անփոփ լուրեր՝ Իրանահայ համայնք.....2
- Իրան.....2
- Հայաստան.....2
- Միջազգային .....4
- Հայերէն-պարսկերէն-անգլերէն առածանի.....5
- Եհովայի վկաները.....6
- Յարցազրոյց .....7-8
- Սևրի դաշնագիրը.....9-10

**Ճապիկի առաջին էջում՝**

Թեհրանի Ազատութեան հրապարակ

**Ճապիկի վերջին էջում՝**

Իրանի Իսլամական Յեղափոխութեան էջերից

**ԺՅՆ 33-44 30 ՄԱՐՏԻՆ, 2002Ա.**

*No. 33-44 30 January 2002*

Խումբագրութեան Կրտսեր

**Ի. Էն. Է»ՅԿ. Է. ՆՅԻՅԿ»ՅԿ  
 Ն. Է »ճճ»ՅԿ, ի . ի ՅՆՅԿ»ՅԿ**

**Ս**ամուլի հրատարակման դժարութիւնները արդէն իսկ յայտնի են բոլոր ընթերցասէր անձանց, ուստի խուսափելով կրկնութիւններից, միայն հարկ ենք համարում յայտնելու մեր սիրելի ընթերցողներին, որ «ԼՈՅՍ»-ն էլ գերծ չի մնացել այդ դառ սակայն յամառօրէն կենդանի իրականութիւնից:

Ինչպէս մեր նախկին տեղեկագրի միջոցով, այնպէս էլ այժմ յատնում ենք, որ աշխատելու ենք ինչ-որ չափով մեղմացնել թերթի հրատարակման ճանապարհին ծառայած բարդութիւնները և կրկին անգամ լոյս ընծայել դա: Նաև հարկ ենք համարում աւելացնելու, որ վերջին մի քանի ամիսների ընդմիջման ընթացքում խմբագրութիւնը ստացել է բազմաթիւ տեսակէտներ՝ գրութիւնների, հեռագանգերի և ուղղակի հանդիպումների միջոցով, որոնք անդրադարձում էին «ԼՈՅՍ»-ի հրատարակման անհրաժեշտութիւնը և ցանկութիւն դրսևորում կրկին անգամ «ԼՈՅՍ»-ը տեսնել ըբթերցողի սեղանին:

«ԼՈՅՍ» երկշաբաթերթի խմբագրական խորհուրդը ելնելով այդ բուռն ցանկութիւններից ու գործի անհրաժեշտութիւնից, հետևողական և տքնաջան աշխատանքից ու երկարատև ուսումնասիրութիւններից յետոյ յաջողել է գտնել այնպիսի մի բանաձև և գործելակերպ, որի շնորհիւ կարողանալու է թերթի հրատարակման գործը շարունակել, տպագրութեան թեթևակի որակական փոփոխութիւնների ընդունման պայմաններում և առնուազն ամսական մէկական համարով հիւրընկալել ընթերցողի մօտ:

«ԼՈՅՍ»-ը կառչած է մնալու իր որդեգրած այն նպատակներին, որոնք յիշատակւած են նրա առաջին համարի խմբագրականում: Թէև պիտի ընդունել, որ դրանց իրագործումը մեր իրանահայ համայնքի հասարակական, քաղաքական և մշակութային բարդ պայմանների ու մթագնած երկնքի ներքոյ, շատ էլ դիւրին գործ չի ընկալուում:

Խմբագրական խորհուրդը ելնելով ստացւած տեսակէտներից, որոշել է տպագրել յօդւածները ըստ հեղինակի ցանկացած ուղղագրութեամբ:

Խմբագրութիւնը հարկ է համարում իր խորին շնորհակալութիւնները յայտնելու բոլոր նրանց, որոնք թէ՛ Իրանից, թէ՛ արտերկրից իրենց բարեացականութիւնն են ցուցաբերել և բարոյապէս զօրավիզ են հանդիսացել մեզ: Նաև շնորհատրում ենք 2002 թ. Ամանորն ու Ս. Ծնունդը: Ի նկատի ունենալով, որ գտնուում ենք Իրանի իսլամական յեղափոխութեան յաղթանակի տարեդարձային հանդիսութիւնների օրերում, ուստի մեր պարտք ենք համարում այդ կապակցութեամբ շնորհատրել Իրանի ազնիւ ժողովրդին ու պետական յարգելի այրերին: □

**ԱՌՅԿ ՆՅՈՒՅՒՑՈՒ**

Տեղեկանում ենք, որ Իսլամական Յեդափոխութեան 23-րդ տարեդարձը պատշաճ տօնելու համար կեանքի է կոչել գործադիր յանձնախումբ՝ ըստ հետեւեալի. 1-ձ. Ուս. «Չհարմահայ» միութիւնից պրն. Վահագն Ղարախանեան 2-ձ. Մ. «Արարատ» կազմակերպութիւնից տիկ. Ժանետ Թարերդեան 3-ձ. Մ. «Սիփան» միութիւնից պրն. Անդրանիկ Իսրանտեան 4-ձ. ձ. Լ. միութիւնից օր. Ասիկ Գասպարեան 5-ձ. Մ. «Մարդարապատ» միութիւնից պրն. Էդոնոյ Արգարեան 6 - ձ. Մ. «Նայիրի» միութիւնից պրն. Արմէն Ալլահերդեան 7 - Ի. Ա. Մ. Մ. տիկ. Արմենուհի Սիմոնեան

Յանձնախումբը գումարելով իր անդրանիկ նիստը, ընտրել է իր դիւանը՝ հետեւեալ անձնակազմով.

1-Պրն. Վահագն Ղարախանեան՝ նախագահ 2-Օր. Ասիկ Գասպարեան՝ քարտուղար 3-Տիկ. Ժանետ Թարերդեան՝ գանձապահ:

**ԱՌՅԿ**

**Կոֆի Աննանը Թերհանու**

Իսլ. յեդափոխութեան առաջնորդ այաթ. Խամենեյի, ՍԱԿ-ի ընդհ. քարտուղար Կոֆի Աննանի եւ ընկերակցող պատիւրակութեան հետ հանդիպմանը, խօսեց աշխարհում անիրաւութիւններին դիմադրելու համար ՍԱԿ-ի եւ այդ կազմակերպութեան ընդհանուր ժողովի հնարաւորութիւնների մասին:

**Իրանցի Լրագրողները Կարող Են Անդամակցել Լրագրողների Միջազգային Կազմակերպութեանը**

Իրանում ԻԻՆԵՍԿՕ-ի ազգային յանձնաժողովի ընդհ. քարտուղարը ասել է, թե՛ առիթ է ընձեռել, որ իրանցի լրագրողները եւ թղթակիցները անդամակցեն լրագրողների միջազգային կազմակերպութեանը:

Չալի Ըահիմը- ԻՌՆԱ-ի լրագրողի հետ ասուլիսում ատելացրել է, որ լրագրողների միջազգային կազմակերպութեան ընդհ. քարտուղարը Իրան այցի ընթացքում, խոստացել է այդ ոլորտում համագործակցել եւ լրագրողները ցանկութեան դէպքում կարող են անդամակցել այդ կազմակերպութեանը:

**ԾՅՔԵՂԻ ԾԿ**

**Անթիլիասը ստեղծեց նոր թեմ, այս անգամ՝ Կանադայում**

Նորից ծանր հարամ հասցեց Հայ առաքելական եկեղեցու միասնականութեան եւ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի գերագահութեան դէմ: Մոնրեալից ստացանք տագնապալի լուրը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա-ի հրամանով Կանադայում ստեղծել է անջատ, անթիլիասական թեմ: Կատարել է նոր ուսնձգութիւն, որը գոնէ տեսանելի ապագայի համար անկարելի է դարձնում 1956 թ.-ից հայ եկեղեցու ծոցում գոյացած երկփեղկման վերացումը, որը ծիծաղելի է դարձնում Արամ

կաթողիկոսի սրտածնիկ քարոզները եղբայրութեան եւ միասնականութեան մասին: Փաստօրէն Հունաստանի, Մ. Նահանգների Արեւելեան եւ Արեւմտեան թեմերից յետոյ Անթիլիասը գուցահեռ նոր թեմ է ստեղծում՝ այս անգամ Կանադայում, այնինչ Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան պատմականօրէն ամբազրած օրինական թեմերն են հանդիսանում ընդամենը Լիբանանի, Հալեպի (Բերիոյ), Դամասկոսի եւ Կիպրոսի թեմերը:

«Ազգ» օրաթերթ Երևան-11/01/2002

**Կանադայում անթիլիասական թեմի հռչակման կապակցութեամբ ԳՀԽ-ն նամակ է գրում Արամ Ա Կաթողիկոսին**

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ, ՏԵՂԵԿԱՍՏԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ, 12 ՅՈՒՆԻՄԱՐ: Յունուարի 10 եւ 11-ը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի բարձր նախագահութեամբ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում իր աշխատանքը շարունակեց Գերագոյն Հոգեւոր Խորհրդի ընդլայնած նիստը:

Քննարկած խնդիրների շարքում առանձնապատու կարեւորութիւն ունեցողներից էր Կանադայում Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմից թեմ հռչակելու խնդիրը: Գերագոյն հոգեւոր խորհրդի ընդլայնած ժողովը որոշեց նամակ հղել Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Առաջինին՝ յայտնելով իր մտահոգութիւնը:

Քննարկեց նաեւ առաջիկայում Եպիսկոպոսաց ժողով գումարելու հարցը: ԳՀԽ-ն որոշեց Եպիսկոպոսաց ժողովը գումարել 2002 թ. հոկտեմբերի վերջին: Ժողովի կազմակերպման համար նշանակեց յանձնախումբ, որը կ'նախապատրաստի ժողովի հրախորման աշխատանքները:

ԳՀԽ-ն եկեղեցու առաքելութեան առանցքային ուղեւորների շարքում առանձնացրեց կրթական, քարոզչական եւ հրատարակչական գործունէութեան այն ոլորտներն ու օղակները, որոնց շնորհիւ հնարաւոր է արդիւնատես իրականացնել հայ մարդու քրիստոնէական դաստիարակութիւնը:

Եկեղեցասէր երիտասարդաց կազմակերպութիւն հիմնելու խնդիրը, որ նոյնպէս ԳՀԽ նիստի օրակարգում էր, ստացաւ իր սկզբունքային լուծումը: Որոշեց այս կառոյցը ձեւաւորել 1700-ամեակի տօնակատարութիւնների շրջանակներում ստեղծած Երիտասարդական ուխտագնացութեան գրասենեակի հիմքի վրայ:

Քննութեան առնեցին նաեւ եկեղեցու հոգեւորկրթական ոլորտին առնչող օրախնդիր հարցեր, որոնց շարքում՝ քահանայից պատրաստութեան լսարանի ստեղծման խնդիրը: Վերջինիս առիթով Տ. Եզնիկ եպս. Պետրոսեանին յանձնարարեց մինչեւ փետրուարի 1-ը ԳՀԽ-ին ներկայացնել քահանաների պատրաստման դասընթացների ուսումնական ծրագիրը:

Ամենայն Հայոց կաթողիկոսը ժողովականներից ներկայացրեց նաեւ Մայր աթոռ Սբ. Էջմիածնի 9-ամսեայ (ապրիլ-դեկտեմբեր, 2001 թ. ) գործունէութեան հաշիւնազեկոյցը: Եկեղեցական կեանքին առնչող վարչակազմակերպական բնոյթի հարցերի շարքում էր նաեւ Վիրահայոց թեմում նոր առաջնորդի նշանակման հարցը:



կաթողիկոսարանի կողմից Կանադայում նոր թեմ ստեղծելը: «Նոյեան տապան»-ի թղթակցի հետ գրոյցում Եզնիկ սրբազանը նշեց, որ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը չէր կարող նոր թեմեր ստեղծել իր սահմաններից՝ Սիրիայից, Լիբանանից եւ Կիպրոսից դուրս:

Ինչպէս տեղեկացրեց սրբազանը, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա կաթողիկոսը դեռեւս 2001 թ. հոկտեմբերի 13-ին նամակով դիմել էր Ամենայն հայոց Գարեգին Բ կաթողիկոսին, ներկայացնելով նոր թեմ կազմաւորելու անհրաժեշտութիւնը: Նամակում Արամ Ա կաթողիկոսը դա բացատրում էր որպէս վարչական բաժանումներ: Գարեգին Բ-ն պատասխան նամակում մտահոգութիւն է յայտնել, որ նման քայլը լրջօրէն կվնասի այն եղբայրութեան եւ միութեան ոգուն, որ ստեղծել է երկու աթոռների եւ ժողովրդի կեանքում 1988 թ.-ից յետոյ:

Ըստ Եզնիկ եպիսկոպոս Պետրոսեանի, չնայած Վեհափառ հայրապետը յորդորել է Արամ Ա-ին կոնկրետ միջոցներ ձեռք չառնել մինչեւ 2002 թ. յունւարին գումարելիք Գերագոյն հոգեւոր խորհրդի նիստը, որտեղ լրջօրէն կքննարկվի այդ հարցը, այնուհանդերձ յունւարի 1-ից Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Կանադայի նորահաստատ թեմը կեանքի է կոչւել:

Եզնիկ եպս. Պետրոսեանը տեղեկացրեց, որ ի սկզբանէ Կիլիկիոյ կաթողիկոսարանն ուներ 14 թեմեր՝ Կիլիկիայի սահմաններում, սակայն առաջին Համաշխարհային պատերազմից եւ Մեծ եղեռնից յետոյ, երբ 10 տարւայ դեգերումներից յետոյ հաստատուել է Անթիլիասում, կաթողիկոսութիւնը կորցրել է թեմերից 13-ը՝ պահպանելով միայն Հալեպի թեմը: Այդ ժամ Երուսաղեմի պատրիարքութիւնից նրան են փոխանցուել Գամասկոսի եւ Լիբանանի, Պոլսի պատրիարքութիւնից՝ Կիպրոսի թեմերը, եւ ստեղծուել է այն նոր իրաւական տարածքը, որի մէջ պէտք է գործեր Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը: Խնդիրները ծագել են 1956 թ.-ին, երբ պատճառաբանելով, թէ Էջմիածինը գտնուում է կոմունիստական երկրում եւ ազատ չէ գործելու, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանը «գրաւել է» Պարսկաստանի 3 թեմերը, ինչպէս նաեւ հակաթոռ թեմեր ստեղծել Հունաստանում եւ ԱՄՆ-ում: Եթէ մինչ 1988 թ. երկու աթոռների միջեւ ոչ մի յարաբերութիւն չկար, ապա երջանկայիշատակ Վազգէն Ա կաթողիկոսի յորդորներով այդ տիպի մթնոլորտը մեղմացաւ, ինչը, ըստ սրբազանի, յույս էր ներշնչում, թէ կանոնական վիճակը վերականգնելու ուղիներ կգտնուեն:

«Այդ մերձեցումը փոխանակ ավելի ամրապնդւել, այս քայլով վտանգուում է, որովհետեւ ասպացուում է, որ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը այն ժամանակ ոչ թէ ինչ-որ քաղաքական պատճառներով, այլ յատուկ ծրագրով էր առաջ տանում իր գործընթացը, հաւանաբար այն կարգախօսով, որ Հայաստանը եւ նախկին ԽՍՀՄ երկրները պէտք է պատկանեն Էջմիածնին, Սփիւռքը՝ Անթիլիասին. նման արտայայտութիւններ եղել են նրանց կողմից», յայտարարեց սրբազանը:

Քրիստոնէական բոլոր եկեղեցիների կեանքում, ընդգծեց Եզնիկ եպիսկոպոսը, մէկ աշխարհագրական

միջավայրում կարող է միայն մէկ թեմ գոյութիւն ունենալ: Երկու թեմի գոյութիւնը նշանակում է, որ կա՛մ թեմերից մէկը հակականոնական, հակաթոռ թեմ է, կա՛մ այդ թեմերի դեկավար կազմակերպութիւնները նոյն եկեղեցին չեն: Սրբազանը գտնում է, որ այս քայլով Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը մէկ անգամ եւս հաստատում է, որ ինքը առանձին եւ անկախ եկեղեցի է, եւ հայ եկեղեցու միութեան վերաբերեալ նրանց կողմից ասուած բոլոր քարոզները խաբկանքի արտայայտութիւններ են եղել: Այնինչ Սայր աթոռը եւ նրա բոլոր թեմերը, Եզնիկ եպիսկոպոսի խօսքերով, կողմակից են ջերմ յարաբերութիւնների, մանաւանդ որ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը Հայ առաքելական եկեղեցու հարստութիւններից է եւ պէտք է իր արժանի տեղը գրաւի հայ եկեղեցու կազմում:

Եզնիկ սրբազանը յոյս յայտնեց, որ խնդիրը կլուծվի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան սահմանադրութեան շրջանակներում, ըստ որի, Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ազգային ընդհանուր ժողովը դեռ պէտք է վաւերացնի նոր թեմի հռչակումը. «Կարծում եմ, այդ ժողովը կանդրադառնայ այն բոլոր անցանկալի հետեւանքներին, որ կարող է ունենալ այս երեւոյթը, եւ այդ վաւերացումը տեղի չի ունենայ»:

### Հայաստանում գրանցուած է 107 կուսակցութիւն, 2001-ին գրանցուել է 122 նոր լրատւամիջոց

ԵՐԵՒԱՆ, 11 ՅՈՒՆԻԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: 2001 թ. ընթացքում ՀՀ արդարադատութեան նախարարութիւնում գրանցուած կուսակցութիւնների թիւն աճել է եւս 12-ով: Ըստ ՀՀ արդարադատութեան նախարարութեան պետեզփարտի կենտրոնական մարմնի հասարակական միատրումների եւ լրատութեան միջոցների գրանցման բաժնի պետ Է. Մարգարեանի, ներկայումս գրանցուած կուսակցութիւնները 107-ն են, սակայն դրանցից 35-ի հիմնադիր փաստաթղթերը չեն համապատասխանեցուել «ՀՀ քաղաքացիական օրէնսգրքի» պահանջներին, եւ, ըստ էութեան, անվաւեր են: Միայն մէկ կուսակցութիւն՝ Հայաստանի հայ յեղափոխական դաշնակցութիւնը (նորաստեղծ), դիմել է լուծարման համար: Նշենք, որ 2000 թ. ընթացքում գրանցուել էին ընդամենը 7 կուսակցութիւն:

Գրանցուած հասարակական կազմակերպութիւնների թիւր 2722 է, որոնցից, սակայն, 1052-ն անվաւեր են: 2001 թ. ընթացքում գրանցուել են 326 նոր հասարակական կազմակերպութիւններ, իսկ 2000-ին՝ 288-ը:

Աւելացել է նաեւ ՉԼՄ-ների թիւը. անցած տարում գրանցուել են եւս 122 լրատութեան միջոցներ (20-ով ւաւելի, քան նախորդ տարում), որոնցից 91-ը թերթեր են, 17-ը՝ ամսագրեր, 8-ը՝ հեռուստատեսութիւններ, 4 ռադիոընկերութիւններ եւ 2 լրատւական գործակալութիւններ: ՉԼՄ-ների ընդհանուր թիւը 1205 է, որոնցից վաւեր են եւ գործելու իրաւունք ունեն միայն 578-ը:

# Անրի Վեռնոյ

Յունարի 12-ի երեկոյեան Փարիզի հիվանդանոցներից մէկում մահացաւ մեծահոշակ կինոռեժիսոր Անրի Վեռնոյը՝ ֆրանսիական եւ համաշխարհային կինոյի նշանատր դերերից մէկը, որ յատկապէս իր «Մայրիկ» ֆիլմով կարողացել է



այնքան վճիտ ու առնչունող ներկայացնել Մեծ եղեռնից մազապործ հայ գաղթականների կեանքը Մարսելում:

Ծնել էր 1920 թ. Ռոդաստոյում (Թուրքիա): Բուն անունով՝ Աշոտ Մալաքեան: Ֆրանսիայում բնակուում էր 1930 թ.-ից: Էքս-ան-Պրովանսի ֆրանսիական լիցեյն աւարտելուց յետոյ զբաղել է լրագրողական գործունէութեամբ, «Մարսելեզ» թերթում յօւածների շարք է հրատարակել Հայոց ցեղասպանութեան մասին: 1948 թ.-ին անցել է կինոարեստի աշխարհ: Կարճամետրաժ բազմաթիւ գարճալի ֆիլմեր է նկարահանել Ֆեռնանդէլի մասնակցութեամբ: 1951 թ.-ին ստեղծել է իր առաջին լիամետրաժը՝ «Մեղան մեռածների համար», որը նրան հռչակել է Ֆրանսիայի լաւագոյն կինեմատոգրաֆիստների շարքը: Այնուհետեւ Հոլիվուդն է սկսել նրա հետ պայմանագրեր կնքել: Ժան Գաբէնի, Ալեն Դեռնի, Ժան-Պոլ Բեռնոնոյի, Օմար Շերիֆի եւ նշանատր այլ դերասանների հետ ստեղծել է 60-ից ավելի ֆիլմեր: Ամենայայտնիներից են՝ «Արգելած պտուղ», «Հանրային բշնամի թիւ 1», «Մաքսիմ», «Պրեզիդենտ», «Եւ ինչպէս... Իկար», եւ, ինչպէս ասեց, «Մայրիկ» ֆիլմն Օմար Շերիֆի, Սերժ Ավետիքյանի եւ այլ դերասանների մասնակցութեամբ: Պարզեատրուել է «Պատուոյ լեգեոն» բարձրագոյն կարգի շքանշանով, իսկ անցեալ տարի ընտրուել է ֆրանսիական գեղարեստի ակադեմիայի անդամ:

Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակն առաջին ցաւակցողներից էր աշխարհոշակ կինոռեժիսորի հարազատներին:

## Եւրախորհրդարանը Թուրքիայից պահանջում է վերջ տալ Հայաստանի շրջափակմանը

Եւրոպական խորհրդարանի արտաքին գործերի յանճնաժողովը շուտով քւեարկելու է Հարաւային Կովկասի հետ Եվրամիութեան յարաբերութիւններին վերաբերող մի որոշում, որը ներկայացրել է Շւեդիայից պատգամատր Պեր Գահրտոնը: Փաստաթուղթը, ինչպէս տեղեկացնում են Եւրոպայի հայկական միութիւնների ֆորումի գրասենեակից, անաշառ քննում է Վրաստանում, Ադրբեջանում եւ Հայաստանում տիրող սոցիալական,


տնտեսական, քաղաքական վիճակը եւ քննադատում նրանց:

Փաստաթուղթը Եւրամիութիւնն առաջարկում է վերջապէս մնայուն ներկայացուցիչներ ուղարկել Բաքու ու Երեւան: Փաստաթղթում յատուկ մի յատած վերաբերում է Թուրքիային: Մասնատրապէս կրկնելով Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ 1987 թ.-ին ընդունած իր որոշումը, Եւրախորհրդարանը Թուրքիայից պահանջում է վերջ տալ Հայաստանի շրջափակմանը: Բնականաբար, նշեալ յատածը կատաղի դիմադրութեան է հանդիպել Եւրամիութիւնում Թուրքիայի ներկայացուցչական միսիայի կողմից, որը պահանջում է որոշման նախագծից հանել այդ յատածը:

## Ջոն Օրդուեյ. Ադրբեջանի որեւէ գործողութիւն կարճանաայ միջազգային հանրութեան եւ Միսակի խմբի դիմադրութեանը

ԳԼԵՆԴԵՅԼ, 16 ՅՈՒՆԻԱՐ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ - ԱՄԵՐԻԿԱՅԻ ՉԱՅՆ: Յունարի 15-ին Գլենդէլյում կայացած մամլոյ ասուլիսում ՀՀ-ում ԱՄՆ նորանշանակ դեսպան Ջոն Օրդուեյն ասել է, թէ Հայաստանն ամերիկեան արտասահմանեան օգնութիւն ստացող կարեւոր երկրներից մէկն է: Ընդ որում, այդ օգնութիւնը հիմնականում նպատակաուղղած է երկու բնագաւառների համար՝ նպաստել Հայաստանի տնտեսական զարգացմանը եւ օգնել երկրի սոցիալ-տնտեսական ենթակառուցածքին ու ժողովրդավարացման գործընթացին:

Օրդուեյը բացառել է պատերազմի հաւանականութիւնը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ՝ նշելով, որ «Ադրբեջանը նոյնիսկ անկարող է գնալ ռազմական ուղիով»: Խօսելով դարաբաղեան հարցի խաղաղ կարգաւորման մասին՝ նա մասնատրապէս նշել է. «Այս ամբողջ գործընթացում մեր նպատակն է՝ նաւեցնել լարածութիւնը, կասեցնել պռռտախօսութիւնը ու ջանքեր գործադրել հակամարտ կողմերին ի մի բերելու համար եւ այնպիսի ուղիներ որոնել, որոնցով եթէ չենք կարողանում անմիջական լուծման հանգել, գոնէ կարողանանք որոշ վստահութիւն առաջացնել եւ այնպիսի ժամանակատր միջոցառումներ ծրագրել, որոնք ի վերջոյ կհանգեն դարաբաղեան հիմնահարցի վերջնական լուծմանը»: Շեշտելով, թէ ինքը չի ցանկանում թերագնահատել ադրբեջանական կողմի սպառնալից յայտարարութիւնները, դեսպանը նշել է, որ «ռազմական որեւէ գործողութիւն ոչ խելամիտ ընտրութիւն կլինի, որը խորապէս կարճանաայ Միսակի խմբի բոլոր անդամների ու միջազգային համայնքի դիմադրութեանը»: □



## Գոյատեւման համար ոչ մի այլ ելք չկայ ,եթէ ոչ տարբեր տեսակետի մարդկանց միաւորումը

Հարցազրոյց իրանահայ հասարակական գործիչ, ՊԺ պատգամաւոր

### Աշոտ Սինանիի հետ



**Լոյս.-** Պրն Սինանի, խնդրում ենք արտայայտել ձեր տեսակետները ՊԺ-ի մասին, թէ՛ 12-րդ շրջանի ընտրելուց առաջ , թէ՛ հիմա, որպէս ՊԺ պատգամաւոր:

**Ա.Սինանի.-** Երկար տարիներ տեղին մինչև 12-րդ շրջանի ՊԺ ընտրութիւնները տեղի ունեցան, դրա ուշացման պատճառների մասին հարկատու է խօսել մի այլ առիթով, սակայն մի մեծ յաջողութիւն էր, որ այդպիսի արտօնութիւն ստացւեց և դա տեղի ունեցաւ: Ինչ վերաբերում է ընտրութիւնների հետագայ շրջանին, հարկ եմ համարում յայտնելու , որ իրավիճակը համեմատաբար շատ աւելի գոհացուցիչ է, քան նախկինում էր: Հիմա զանազան մտքերի տէր անձինք կարողացել են մտքը գործել ՊԺ և նախկինի պէս ժողովը միակողմանի չէ: Ընտրութիւնների ժողովրդավարական դրսևորման օրինակելի մոտիւններից է հանդիսանում Սասուն (Չարքէշ և Նարմաք) թաղամասը, որը ամենահայտնի շրջանն է ողջ Իրանում և մանաւանդ Թեհրանում և տեղի ունեցած ընտրութիւնը, որը իրականում փաստեց, որ ժողովուրդը յաջողեց իր ցանկութիւնները իրականութիւն դարձնել , և ես դա շատ դրական եմ ընկալում, նաև պիտի ի նկատի ունենանք այս հանգամանքը, որ այդ թաղամասը անցեալում ժողովրդավարական ցանկութիւնների դրսևորման ամենացայտուն օրինակներից է եղել և հենց նոյն պատճառով էլ այդ տեղ աւելի շատ աշխատանքներ են կատարել հասարակական, մշակութային և կրթական ասպարէզներում, համեմատելով Ձէթուն (Մաջդիդէ) թաղամասի հետ որում եկեղեցին ու միութիւնն աւելի ուշ կառուցեցին, և այդտեղ միջնակարգ դպրոց չի բացել: Այդ թաղամասը իր ուժեղ ազդեցութիւնը թողեց և Սիփան միութեան առաջադրած ցանկից դուրս մի քանի թեկնածուների էլ յաջողեց փայլուն արդիւնքով ընտրուել, որը հենց այդ թաղամասի ժողովրդի ազատ կամքին է վկայում: Իհարկէ նոյնն էլ ինչ-որ չափով կատարուեց մեր Ձէթուն թաղամասում, մինչդէռ այդպիսին չեղավ օրինակ սուրբ Սարգիս եկեղեցու ընտրատրածքում, որի մէջ ընտրուեց ասանդական կերպով առաջարկուած ցանկը: Ինչորէ հիմա ներքին որոշումները աւելի ազատ կերպով են կատարում, սակայն դեռ վաղ է մտածել, որ կարողացել ենք լիովին հասնել մեր բոլոր բաղձանքներին, դեռևս մեծամասնութիւնն իր խօսքն ունի ասելու, որոնք հովանաւորում և հրահանգում են կուսակցութեան

կողմից: Այսուհանդերձ ես արդիւնքը դրական եմ գնահատում, մեր ներկայութիւնը որպէս նախկինում ընդդիմադիր և հիմայ որպէս գործընկերներ այս ազդեցութիւնն է թողնելու, որ ամենևին էլ ճիշտ չէ հեռու կանգնել և հեռուից թշնամանք ցուցաբերել մէկը միւսի նկատմամբ, որը իմ կարծիքով սպազայում վերանալու է: Մանաւանդ որ մօտիկից համագործակցելով հասկանում ենք, որ 90-ից վեր տոկոսով նոյն հոգսերն ու հարցերն ու նպատակներն ունենք, որոնց գլխատուրը մեր համայնքի որակով ու մշակութային գոյատուումն է , դեռ կան կուսակցական մօտեցումներ , որը բնական է, սակայն մենք ալեքզիա չունենք, և պարզօրէն համագործակցութեան ոգին նկատում ենք, առողջ թեմական խորհուրդ ենք ընտրել, որը ամեն ձևի քննադրութիւնը ընդունում և աշխատանք է տանում, մի խօսքով, շատ դրական եմ գնահատում իրավիճակը և յոյս ունեմ սպազայում սրանից շատ աւելին կարող ենք համագործակցութեան վրայ յուսադրել որպէսզի միասնաբար լուծենք մեր համայնքին յուզող խնդիրները:

**Լոյս.-**Արդեօ՞ք ձեզ ժառանգուած հարցերին էլ անդրադառնում էք ներկայ ժողովներում:

**Ա.Սինանի.-** Անշուշտ, տեղեկանում ենք թեմականի տարբեր զեկոյցներին անցեալի զանազան հարցերի մասին , և մեծամասնութեան կողմից հանդուրժողակամութեամբ ընկալում և աշխատում է նախկին անյարի և անճիշտ քայլերը չկրկնել կամ ճիշտ հունի մէջ դնել չաւարտածները: Ձեր հարցի այն մասին, որ վերաբերում է Հայաստանի 1988 թ. երկրաշարժին, կարող եմ ասել, որ այն որպէս օրակարգ չենք ունեցել, սակայն անդրադարձել ենք ծորակաշինութեան գործարանի հարցին, որը գնահատել ենք որպէս ոչ շահեկան քայլ, թէև ի սկզբանէ, վատահ բարի նպատակ է հետապնդել, որ դրա միջոցով աշխատանք կսեղծուէր հայրենի ժողովրդի համար, սակայն ինչքան գիտենք այդ խնդիրը չի ծառայել իր որոշուած նպատակին, միայն յետագայում սարքաւորումները յանձնուեցին Ս. Էջմիածին:

**Լոյս.-**Արդէն երկար ժամանակ է որ Պրն Արտաւազը Բաղումեանը չի մասնակցում ՊԺ-ին, բայց դեռևս նրա անձնավոխիսնորդը չի ստանձնել նրա պարտականութիւնները, այդ օրինազանցումը ի՞նչպէս էք ընկալում:

**Ա. Սինանի.-**Համաձայն չեմ ներկայ դրութեանը, սակայն յարգելով Դիւանի տեսակետն ու որոշումը, որը երկի թէ կուսակցութեան հրահանգումը լինի, նաև որպէսզի մեր համագործակցութեան միւս բնագաւառները վտանգի չենթարկեն, ուստի մեղմ ենք մօտեցել այդ հարցին, հաւատում եմ որ համայնքում բացի ներկայ 52 անհատներից գոյութիւն ունեն այլ արժանի մարդիկ և յուսով եմ սպազայում կամ ինքը Պրն Բաղումեանը կամ նրա անձնավոխիսնորդը կը մասնակցի պատգամաւարական ժողովին:

**Լոյս.**-Արդեօ՞ք թաղամասի միս պատգամաւորների հետ էլ հանդիպումներ ունէք:

**Ա. Սինանի.**- Այո, երբ Շանթ դպրոցի գործերի համար անհրաժեշտ էր յաճախ էինք հանդիպում, սակայն երբ հարցերը իրենց բնականոն հունի մէջ մտան, հանդիպում չենք ունեցել, կողմնակից ենք այդպիպի հանդիպումների մասնաւանդ ժողովրդի հետ, որոնք ցաւօք մինչ օրս տեղի չեն ունեցել:

**Լոյս.**- Որպէս Մաջիդիէի պատգամատր, խնդրում ենք մեզ իրազէկ պահէք թաղամասում կառուցող դպրոցի իրավիճակի մասին:

**Ա. Սինանի.**- Սկզբում մի յատակագիծ էր պատրաստել, որը մենք՝ թաղի պատգամաւորներս յարմար չնկատեցինք, շատ յապճեպ մի գործ էր ուզում կատարել, իհարկէ մի 120-մետրանոց հողամասի հարցն էլ կար, որ պիտի կցւեր դպրոցին, և որի պաճառով գործը մի 8-9 ամիս ձգձգուեց, Մարիամեան դպրոցի վաճառման գումարից օգտուելով, աշխատանքը սկսեց նոր պլանով, դպրոցի իսկական կմախքը պատրաստ է, պատերն են շարուած, արդէն վերջին յարկի առաստաղն են սարքում, յոյս ունենք յաջորդ ուսումնական տարւայ համար կպատրաստի և օգտագործման կտրուի: Շինարարական ծախսերի մասին տարբեր զեկոյցներով մեզ տեղեակ են պահում, և մենք լաւատեսօրէն ենք գնահատում մեր Թեմական խորհրդի աշխատանքները, դպրոց այնպէս է կառուցուել, որպէսզի Նայիրի միութեան հողամասում, որը թաղի նիւթատուները ցանկացել են յատկացի նոր դպրոցի կառուցմանը, Մայիսից սկսուելու շինարարական աշխատանքը, և երկու դպրոցները հետագայում կը միացան իրարար: Սրանի միանալու հնարաւորութիւն կայ:

**Լոյս.**- Պարսկական դպրոցներում սովորող հայ աշակերտների ուրբաթօրեայ դասընթացները, ինչքան գիտենք շատ էլ յաջող չեն ընթանում, այդ մասին խնդրեն:

**Ա.Սինանի.**- Յաւօք մեր դպրոցներում ուսուցման շատ բարդութիւններ կան և բաւարար արդիւնք չենք ստանում, այդ դասընթացներն էլ զերծ չեն մնում այդ դժարութիւններից: Իսկ եթէ այդ դասարանները կարգ ու կանոնով չեն կազմում, դա քննադատելի է, ուսի խնդրում ենք եթէ անկարգութիւններ կան մեզ տեղեկացրէք, որպէսզի քննարկման առարկայ դարձնենք՝ Թեմականին փոխանցելով և նրանք էլ Կրթականից պահանջեն:

**Լոյս.**-Երկար տարիներ է, որ Մաջիդիէ թաղամասում հիմնուել է «Սուբերեան» սրահը, որը պիտի ծառայէր թաղամասի մշակութային և հասարակական աշխատանքներին, սակայն դա նիւրել է Նայիրի միութեանը, և նախկինում բազմիցս պատահել է, որ դրա դռները փակ էլ մնացել տարբեր խմբերի և անհատների առջև, այդ մասին արտայայտէք:

**Ա. Սինանի.**- Որպէս տեղեկութիւն, այդ հարցը արծածել է ՊԺ-ում, և խօսել է, որ ինչու դա բոլորի համար չլինի, սակայն դա երբեք օրակարգ չի դարձել, իսկ եթէ օրակարգ էլ դառնա ես վստահ եմ, որ անմիջական արդիւնք չի սպասուի, որովհետև գիտենք, որ դեռևս խոչնդոտներ կան, սակայն յուսով եմ որ մեր երկարատև

աշխատանքը կհանգնի նրան, որում մեր համայնքի տարբեր խմբակցութիւններն ու միութիւնները կը գրաւեն իրենց ուրոյն տեղն ու հանգամանքը, այսօր մենք արդէն տեսնում ենք, որ օրինակի համար ԻԱՄՄ մասնակցում է ապրիլեան ծրագրերի կազմակերպմանը և միս յանձնախմբերի մի քանի տարի առաջ նոյն այս միութեանն ու ինձ խորհրդարանի ընտրութիւնների համար առիթ տրուեց օգտագործել Սուբերեան սրահը, : Սակայն այդ ամենով հանդերձ յոյս չունեն որ մօտ ապագայում, բացի Նայիրի միութիւնից թաղի միս միութիւնն էլ այնպէս՝ ինչպէս այս վերջին միութիւնը առիթ ունենայ օգտուելու այդ հնարաւորութիւններից, բայց դա լուծելի խնդիր է:

**Լոյս.**- Օրերս տեղեկացանք, որ Կանադայում ստեղծուել է անթիլիասական թեմ, արդեօ՞ք այդ մասին խօսել էք ՊԺ-ում, ի՞նչ կարծիքի էք այդ մասին:

**Ա. Սինանի.**- Միայն լուրն եմ լսել, որը ինձ տահոգեց, այդ հարցը դեռ չենք արծարծել, սակայն պիտի ասեմ, որ եթէ այսօր խօսում ենք մէկ հայրենիք, մէկ եկեղեցի, մէկ ժողովուրդ և մէկ մշակոյթի մասին, այդ կատարած քայլը և որևէ անջատողականութիւն խոչնդոտում է միասնակաւնութեան ոգին, ատելի լաւ էր այդպիսին չկարարել, չի թում այդ հարցը արծարծի ՊԺ-ում, բայց կարցում եմ յարաջիկայ Ազգային ժողովը որը պիտի տեղի ունենայ Անթիլիասում և որում պիտի մասնակցեն Իրանահայ պատիրակները, կը խօսուի:

**Լոյս.**- Պրն Աշոտ Սինանի, դուք որպէս երկար տարիների հասարակական գործիչ և խորհրդարանական ընտրութիւնների թեկնածու, արդեօ՞ք ներկայ հանգամանքը բաւարար էք գնահատում:

**Ա.Սինանի.**- Ես միշտ էլ կողմնակից եմ եղել հասարակական աշխատանքներին անկաշկանդ մասնակցելուն և աշխուժութիւն ստեղծելուն, պարտութեան պարագայում երբեք չեմ հիասթափուել և մտածել եմ դա ինքնին յաջողութիւն է և միշտ տարբեր պայմաններում կարելի է ծառայել ժողովրդին: Ես ոչ մի այլախոհի թշնամի չեմ կարծում, բոլորս էլ ազգակից եղբայրներ ենք, որ մի քիչ ճաշակով ենք տարբերում, բոլորի նպատակն էլ գոյատևումն է, և գոյատևման համար ոչ մի այլ ելք չկայ, եթէ ոչ տարբեր տեսակետի մարդկանց միաւորումը. կարող են տարբեր մտածելակերպ ունենան բայց յանուն ընդհանուր համայնքի շահերի միասնաբար աշխատեն:

**Լոյս.**-Շնորհակալ եմ, եթէ այլ խօսքեր կան, խնդրեն:

**Ա.Սինանի.**-Յատում եմ որ համայնքի մէջ լայն տարածում չի գտնում մամուլը, սակայն խնդրանքս սա է որ դուք էլ որպէս մամուլ համերաշխութեան ռաւիւրաններն լինէք, ցանկալի է, որ քննադատութիւնները կառուցողական և առողջ հողի վրայ լինեն, խնդրում եմ միս մամուլի հետ հանդիպումներ և մտքերի փոխանակումներ ունենաք, որպէսզի կառուցողական հիմքերը փոխարինեն յերիւրանքներին, և սրանով թոյլ չտանք մեր համայնքը քայքայման նոր վտանգի ենթարկուի:

**Լոյս.**- Անշուշտ:

3/1. ' 3Օ՝ՅԵՅՅՅ

**Յեղասպանութեան վերապրողների յուշերից**

Ê ³ ñµ»ñóÇ Øáðñ³ ¹»³ Ý  
Âñð³ Ý¹³ óÇ  
ä³ ì Û³ Í Á (Ì Ýð. 1905 Ñ.)

Հիսուն գիտ՝ Մուշը, Վանը, Սամսոնը, Ղարսը, Ադրահանը, Էրզրումը, Քղին, Բալուն Չարսանջակը Էրզնկան, Աւազը, Եոզղատը, Արաբկիրը, Մալաթիան, Խարբերդը, Տիգանակետը եւ ուրիշները, աս բոլորը մեր հին Հայաստանն էր: Մեր հին Հայաստանի հողերուն վրայ Պարսկաստանի քիւրդերուն աքսորել էին...

Ես 1905 թի ծնունդ եմ, կը յիշեմ դեռ մեզի աքսոր չիանած, թուրքերը Էկան, ջահելներուն հաւաքեցին, զինտր տարին: Իմ հորեղբոր աղջկան ամուսինին ալ ուզեցին տանել, ան չիանձնաւ՝ սպանեցին: Անոր կնկան ուզեցին տանել, որ իրենց կին դառնայ, խեղճ հորեղբորս աղջիկն սկսաւ բռնալ.- Ինձի չմտեանա՛ք. ես թշնամու ծոցը չեմ պառկի...

Ան ժամանակ խեղճը ճարահատ մօտեցաւ ծխնետոյզին, հոն թուրքի մէջ փաթթած ճերմակ թայն մը կը պահէր: Գառուկի դմակի վրայ, որ վերջ կը լլար, աղ կը քսէին՝ կանցներ: Առաւ աղ թոյնը ափով իր բերանը լեցուց: Վայրկեանին արիւնը Ֆշշաց անոր բերանէն՝ մեռաւ: Անոր դիակը դուրս քաշեցին, երեւի գազանները կերան...

Ետքը թուրքերը ընկան մեր մէջը, սկսան մեզ կոտորելը: Մամաս փախցրեց թուրքի մը օբայի մէջ, ուրտեղ հորեղբայրս էր թաքնւած: Մամաս անոր ըսաւ.- Փախի՛ր, Պետրո՛ւս, սաղ գիւղը կոտորեցին...

Ետքը եկան հորեղբորս կնկան սպանեցին, գրկի երեխան գլորաւ բայիրեն, մեռաւ... Մամաս փախաւ, որ իրեն ալ չսպանեն:

Մեզ երեխեքիս բերին հաւաքեցին մի տեղ, չորս հոգի էինք՝ մի տղա, երեք աղջիկ: Կացինը բերին, որ մեզ կոտորեն: Հորեղբայրս տղային ականջը կտրեցին: Աղ ժամանակ թուրքի կնիկը մեղքցաւ, ականջը առաւ տուրոգով կացուց, պինդ կապեց: Գիշերը մնացինք թուրքի օբային մէջը, կուլա՛նք: Նէ՛ մայր, նէ՛ հայր: Գլուխնիս քարերուն կը զարնենք, որ մեռնինք, չմեռանք:

Թուրք կնիկը մեր չորսիս, ականջը կապած վիրատր հորեղբորս տղային ալ հետերնիս, տարաւ մեր գիւղը, պզտիկ քոյրիկիս ալ ինքը գրկել էր: Մենք ուրախացանք, որ մեր գիւղն ենք գնում, բայց երբ գիւղ մտանք, տեսանք, որ Պետրոս հորեղբորս սպանել են ջաղացքի քովը: Աղ թուրք կնիկը թողեց Էդտեղ, գնաց: Մենք մնացինք մենակ, չենք գիտեր ո՞ր էր թթանք, պզտիկ ենք: Տեսանք հեռուէն արդրով հողագործ մը: Մենք վախերնէրս իրարու կը պանք, վախցանք, որ մեզ պիտի մորթէ: Տեսանք, որ մեր միս հորեղբայրս է, ըսաւ.- Գացէ՛ք թուրքի գիւղը, պապանիդ գիւղապետին քովը կաշխատի:

Մենք էլանք գացինք: Եուները հարձակւած մեր վրայ: Մէկ էլ տեսանք մի ջահել աղջիկ էկաւ զիբիլ թափելու: Մեզի տեսաւ, շուներն ազատեց: Աղ աղջկան ալ թուրքերը փախցրել էին, բռնի ամուսնացրել էին իրենց տղի հետ: Էդ աղջիկը մեզի ըսաւ.- Չեր պապան էստեղ է, աղայի մօտը:

Գնացինք, գտանք, տեսանք՝ մեր պապան է: Ուրախացանք, մեզ քնտեղ ուտացրին...: Իրիկունը թուրք աղան պապայիս ըսաւ.- Գասպա՛ր, ա՛ն էրեխեքիդ, գնա՛յ էստեղից, թէ չէ՛ մեզ ալ վնաս կուգայ:

Աղ ժամանակ քովի գիւղէն Սայիդ աղան աս մեր Ալի աղային մօտ կուտարկէ իր ծառային, որ Գասպարին բերել տայ իր մօտը: Դու մի ըսեր, մամաս ու մեծ մամաս ալ աղ Սայիդ աղային քովը կաշխատին: Պապաս մեզի հաւաքեց, էլանք գացինք Սայիդ աղային քովը: Հոն պապայիս տարին գերանդիով խոտ կտրելու: Երկու օր ետքը իմացանք, որ պապայիս գերանդիով մորթել էին: Սայիդ աղան մամայիս ու մեծ մամայիս ըսաւ.- Էլէ՛ք էստեղից գնացէ՛ք, թէ չէ՛ մեզի ալ վնաս կուգայ:

Մամաս ու մեծ մամաս մեզի առին ու դուրս Էկանք: Ո՛չ ճամփայ գիտէնք, ո՛չ ծանօթ ունինք: Մէկ էլ ասկեար մը դեմերնիս էլաւ: Մամաս ըսաւ.- Մեզի ճամփայ ցոյց տուր:

-Չեր ունեցածը ինձի տւէք, ձեզի ճամփան ցոյց կուտամ,- ըսաւ ասկեարը:

Մամաս մէկ հատ քերիքարից փեզքեհ ուներ, տեց թուրք ասկեարին, որ մեզի մեր գիւղի ճամփան ցոյց տայ:

Էկանք մեր գիւղը: Դիակներուն հօտը աշխարհքն էր բռնել: Թուրքերը Էկել էին մեր տուները մտել: Մամաս կերթար թուրքերու ցորենը կը հաւաքեր, կապրէինք...

Քեմալը, որ սկզբում հրաման էր հանել, որ հայերուն ձեռք չտան, վերջը՝ հրաման ստորագրեց, որ աղ երկիրեն Էլլողը այլեւս վերադառնալու իրատունք չունի:

Մեզ հանեցին մեր գիւղէն, բոլոր ջահելներին հաւաքեցին, խովուշի պէս տեղ մը լցրին, կտուրը բացին, մէջը նաթ լցրին, վառեցին: Յետոյ հաւաքեցին բոլոր կանանց, քարերով ողջ-ողջ գլուխները ճնճեցին: Մամայիս ու մեծ մամայիս ալ քարերով սպանեցօն, էրեխեքին, ոչխարներուն քովէն գառնուկներու պէս առանձնացուցին: Ինձի երեք տարեկան պզտիկ քոյր մը ունէի, երեխեքի հետ անոր ալ առին տարին Բալուի Մուրադ գէտի կամուրջի քովը, վզերը կտրեցին, կոտորեցին, գետը լեցուցին...: Երկու ժանդարմս հինգ հարիւր հոգի աքսոր հանեցին: Սուլիչը կը փչէր՝ հինգ հարիւր հոգին ոչխարի պէս կնաստիչն գետինը: Օր մըն պառկեց, քնեց: Մերոնք հրացանը առին, ասոր սպանեցին, պատրոնդաշն ալ առին, լեշն ալ առին քարշ տիւն, տարին, գետը նետեցին: Մենք ալ՝ ամէն մէկս կողմ փախանք, ազատանք...: Յետոյ գնացինք Ջեզիրէ, անտեղ ապրեցանք, անտեղէն ալ 1947 թ. Էկանք Հայաստան, բայց 1949 թ. մեզի աքսորեցին Սիբիր: Հիմա ալ պատրաստուն ենք Ամերիկա էրթալ: □

Խորը վշտով համակւած ցաւակցում ենք իրանահայ հասրակական և մշակութային նշանատր գործիչ՝ **հանգուցեալ Դարտ. Էմիլ Յակոբեանի** ցաւալի մահուան առթիւ:  
*ԼՈՅՍ-ի խմբագրական խորհուրդ*

Մեր ցաւակցութիւններն ենք յայտնում իրանահայ նշանատր կինոբեմադրիչ **հանգուցեալ Սամէլ Խաչիկեանի** ցաւալի մահուան առթիւ:  
*ԼՈՅՍ-ի խմբագրական խորհուրդ*

## Վերջին տասնամեակում Հայաստան առաքած սփիւռքի մարդասիրական օգնութիւնը

Պատրաստած էր Հայաստան-Սփիւռք  
խորհրդատուական կենտրոնը  
(22-23 սեպտեմբերի, 1999թ.)  
ք. Երևան

Համաձայն 1998 թ. յունարից-1999 թ. յունիսը ժամանակահատուածի համար կառավարութեան տեսլանքի, հայկական եւ ոչ-հայկական կազմակերպութիւնները եւ ոչ-կառավարական կազմակերպութիւնները 1998 թ. Հայաստանին տրամադրել են աւելի քան \$82 միլիոն օգնութիւն (41.1 միլիարդ դրամ)՝ (30%-ով աւելի պակաս, քան 1997 թ.): Մարդասիրական օգնութեան 62.2%-ը բաժանել էր բարեգործական, կրօնական եւ ոչ-եկամտաբեր կազմակերպութիւններին միջեւ, 37.8 %-ը՝ տարբեր նախարարութիւնների եւ պետական հաստատութիւնների կողմից: Օգնութեան ընդհանուր ծաւալի 20%-ը առաքել էր Միացեալ Նախագահներից (գլխատրապէս Լոս-Անջելեսում հիմնաւած Միացեալ հայկական հիմնադրամի կողմից):

Հայաստան առաքող մարդասիրական օգնութիւնը կազմել է 1998 Հայաստան ներմուծած ապրանքների 9.1 %-ը: 1999 թ. առաջին չորս ամիսների ընթացքում մարդասիրական օգնութեան ծաւալը կազմել է 13.5 միլիարդ դրամ՝ 1999 թ. ներմուծումների 8.1%-ը:

Ըստ Հայաստանի մաքսային վարչութեան զեկոյցի (որը սկսած 19996 թ. կարարում է գրանցումները), 1999 թ. առաջին վեց ամիսների ընթացքում Հայաստան է առաքել \$35.6 միլիոն մարդասիրական օգնութիւն, 1998 թ.՝ \$82.1 միլիոնի,

1997 թ.՝ \$117.2 միլիոն, իսկ 1996 թ.՝ \$81.2 միլիոն:

1998 թ. օգնութեան համարեայ կէսը (49.7%) նախատեսուած էր գիտատնտեսական սեկտորի համար (հիմնականում հացահատիկ եւ պարարտանիւթ), 16.1 %-ը (2.5 միլիարդ դրամ)՝ առողջապահութեան բնագաւառի համար, 8.1 %-ը՝ կրթութեան եւ գիտութեան բնագաւառների համար եւ 10.8%-ը (1.7 միլիարդ դրամ)՝ սոցիալական բնագաւառի համար: Օգնութեան մեծ մասը բաղկացած էր ժամանակակից համակարգիչներից, կառավարման միջոցներից եւ տեխնոլոգիաներից, ինչպէս նաեւ բժշկական սարքաւորումներից, ինչն, ըստ կառավարութեան հաշիւներով, մեծ դեր է ունեցել տնտեսութեան եւ զարգացման ընթացքի արդիականացման գործում:

1998 թ. տարբեր երկրների կողմից իրականացել են \$25 ծրագրեր (12.8 միլիարդ դրամ), որի 72.2%-ը՝ Գաղութային կառավարութեան կողմից: Օգնութեան 34%-ը նախատեսուած էր տարբեր տնտեսական եւ զարգացման ծրագրերի իրականացման համար, 13%-ը՝ Էներգետիկայի սեկտորի համար, 15%-ը՝ առողջապահութեան սեկտորի համար, 17%-ը՝ շինարարական նախագծերի համար, 4%-ը՝ գիտատնտեսութեան եւ 4%-ը՝ կրթութեան համար:

1999 թ. առաջին ամիսների ընթացքում առաքած մարդասիրական օգնութեան կէսը յատկացել է առողջապահութեան (10.5 միլիարդ դրամ), իսկ 1/3-ը՝

գիտատնտեսութեան: Սօտատրապէս մէկ միլիարդ դրամ յատկացել է շինարարութեան համար եւ համակարգիչներ ու օգտագործուած հագուստ (160 տօն), խաղալիքներ եւ սպորտային պարագաներ առաքելու համար:

Ինչպէս տեղեկացրել է կառավարութիւնը, 18 ամիսների ընթացքում (1998 թ. յունարից մինչեւ 1999 թ. յունիսը) ճապոնական կառավարութիւնը յատկացրել է ընդհանուր օգնութեան 30%-ը, Միացեալ մեթոդիստների COR-ը՝ 6.2 %, ԱՄՆ 4.2%, գերմանական կազմակերպութիւնները օգնութեան ծառայութիւնները՝ նորեգիական յանձնաժողովը՝ 3.8% եւ «Փրկէք երեխաներին» կազմակերպութիւնը՝ 2.4%-ը:

Ըստ ՀՀ կառավարութեան մարդասիրական օգնութեան կենտրոնական հանձնաժողովի կողմից պատրաստուած զեկոյցի, 1998 թ. ոչ-հայկական կազմակերպութիւնները Հայաստանում իրականացրել են \$25 միլիոն ծրագրեր: Յանձնաժողովի մի այլ զեկոյցի համաձայն, վերլուծութիւն է արել Հայաստանում տարբեր հումանիտար ծրագրերի եւ հովանաւորող կազմակերպութիւնների տոկոսային յարաբերակցութեան վերաբերեալ՝ Ամերիկեան կարմիր խաչ (33%), Միացեալ հայկական հիմնադրամ (19%), Հայկական ընդհանուր բարեգործական միութիւն (11%), ՄԱԿ (9%), Հայ օգնութեան հիմնադրամ (4%), Ամերիկայի հայ աւետարանչական միութիւն (4%), Բժիշկներ առանց սահմանների Ֆրանսիական կազմակերպութիւն (3%) եւ ուրիշներ:

### 4. Խնդիրներ

Ինչպէս Հայաստանում, այնպէս էլ սփիւռքում մինչեւ վերջին մի քանի տարիները չէր կատարում օգնութեան ներհոսքի պարբերական հաշիւառում: Միայն վերջին տարիների ընթացքում (սկսած 1996 թ-ից) Հայաստանի կառավարութիւնը եւ սփիւռքի կազմակերպութիւնները սկսեցին մանրամասն հաշիւառումներ կատարել իրենց գործունէութեան եւ նիւթատրութիւնների վերաբերեալ: Ոչ-Ֆինանսական (ձեռք բերուած ապրանքներ, մթերք եւ անվճար սարքաւորումներ) օգնութեան մեծ մասը, որ առաքել էր տասնամեակի սկզբում, կամ չի գրանցել եւ կամ չի նշել նրանց ծաւալը: Մասնատրապէս դա վերաբերում է Ֆինանսական կամ այլ օգնութեան ոչ-հայկական աղբիւրներին: Այդ իսկ պատճառով, այս զեկոյցում նշուած քերը չեն արտացոլում 1989 թ-ից սփիւռքի կազմակերպութիւնների կողմից Հայաստան առաքած օգնութեան ընդհանուր կամ «իրական» ծաւալը:


Կրկնակի հաշիւարկ. Մէկ այլ խնդիր է հանդիսանում հաշիւարկը: Քանի որ հայկական կազմակերպութիւնները համագործակցել են որոշ ծրագրերում կամ կատարել են իրենց ներդրումը յատուկ ծրագրերի մէջ, օգնութեան ծաւալի մասին հաշիւառութիւն է կազմել նիւթատու կազմակերպութեան կողմից, ստացող կազմակերպութեան կողմից եւ երբեմն էլ օգնութիւնից օգտող կողմից (օր. «Վառելիք» ծրագրի դէպքում):

Ճար. 2

# ՍԵՒՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Սեւրի հաշտութեան պայմանագիրը, ստորագրել է 1920 թ. օգոստոսի 10-ին, Սեւրում (Փարիզի մօտ), Թուրքիայի սուլթանական կառավարութեան եւ 1914-18-ի առաջին համաշխարհային պատերազմում յաղթած դաշնակից պետութիւնների՝ Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Բելգիա, Յունաստան, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Հայաստան, Չեխոսլովակիա, Սերբերի, Խորաթների եւ Սլովենների թագաորութիւն, Հեջազ՝ միջեւ: Հայաստանի Հանրապետութեան անունից պայմանագիրը ստորագրել է Ա.Ահարոնեանը: Ա. Ահարոնեանը եւ արեւմտահայութեան ներկայացուցիչ Ազգ. պատիրականութեան ղեկավար Պողոս Նուբարը գլխ. դաշնակից պետութիւնների հետ կնքել են լրացուցիչ պայմանագիր փոքրամասնութիւնների իրաւունքների, դիւանագիտական եւ առեւտր. յարաբերութիւնների վերաբերեալ: Միջազգ. իրաւունքի տեսակէտից Հայաստանի Հանրապետութիւնը, որպէս պայմանագրի մասնակից, դէ իւրէ ճանաչում էր պայմանագիրը ստորագրած միւս բոլոր պետութիւնների կողմից:

Ս.հ. պ-ի հիմքում դրել էին 1916-ի *Սայքս-Պիկոյի համաձայնագրի* դրոյթներն ու տերութիւնների 1920-ի *Սան Ռեմոյի կոնֆերանսի* որոշումները: Պայմանագիրը բաղկացած էր 13 մասից ու 433 հոդուածներից, որոնք վերաբերում էին սահմանային եւ քաղ., փոքրամասնութիւնների պաշտպանութեան, ռազմ., ծովային եւ օդային, գերիների եւ պատիժների, տնտ. եւ Ֆին. օդային նաւագնացութեան, ջրային եւ երկաթուղային ճանապարհների, աշխատուժի հարցերին: Ս.հ. պ-ի համաձայն Թուրքիային մնում էին Կ. Պոլիսը



**Սեւրի հաշտութեան պայմանագրի ստորագրումը երկրորդ շարքում՝ Ա. Ահարոնեան եւ Է. Վենիզելոս**

եւ շրջակայքը, ապառազականացում էին նեղուցները եւ դրում միջազգային կառավարման ներքոյ: Թուրքիան հրաժարում էր իր գերիշխանութիւնից Թրակիայի նկատմամբ, Էգեյեան ծովի կղզիներից. Կիպրոսից. Եգիպտոսից եւ արաբ. տիրոյթներից: Հունաստանը կառավարելու էր Իզմիրն ու նրա շրջակայքը եւ կարող էր տիրել այդ տարածքին, եթէ դա ցանկանար բնակչութեան մեծ մասը: Ասիական Թուրքիան սեղմում էր մինչեւ Արմ. Անատոլիայի սահմանը: Հեջազը անկախութիւն էր ստանում, իսկ Եգիպտոսը, Պաղեստինը, Սիրիան ու Միջագետքը (Իրաք) Ազգերի լիգայի միջոցով որպէս ենթամանդատային տարածք հանձնում էին Մեծ Բրիտանիային ու Ֆրանսիային: Ս. հ. պ. շատ առումներով հեշտացնում էր Մերձ. Արլ-ի շարունակող շահագործումը երոպ. տերութիւնների կողմից եւ ուղի էր հարթում լրացուցիչ վարչ., իրաւաբ., ռազմական եւ տնտեսական վերահսկման համար:

Ս. հ. պ-ի «Հայաստան» բաժինն ընդգրկում էր 88-93-րդ հոդուածները: Թուրքիան Հայաստանը ճանաչում էր որպէս «ազատ ու անկախ պետութիւն»: Թուրքիան ու Հայաստանը համաձայնում էին Էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բիթլիսի նահանգներում (վիլայեթներ) երկու պետութիւնների միջեւ սահմանագատումը թողնել Ամերիկայի Միացեալ Նահագների որոշմանը եւ ընդունել ինչպէս նրա

որոշումը, նոյնպէս եւ բոլոր առաջարկները Հայաստանին դէպի ծով ելք տալու եւ յիշեալ սահմանագծին յարող օսմ. բոլոր տարածքների ապառազականացման վերաբերեալ (տես *Վիլսոնի իրաւարարական պայմանակարգ*): Աղբրեջանի եւ Վրաստանի հետ Հայաստանի սահմանները որոշելու էին այդ պետութիւնների ուղղակի բանակցութիւնների միջոցով: Եթէ այդ պետութիւններին չյաջողէր համաձայնութեան գալ, ապա գլխ. դաշնակից տերութիւնները խնդիրը պէտք է լուծէին յատուկ յանձնաժողովի օգնութեամբ՝ տեղում: Ս.հ. պ-ի համապատասխան հոդուածները թոյլատրում էին

բնակչության կամաւոր փոխանակում. տասնութից բարձր տարիք ունեցող անձինք կարող էին քաղաքացիութիւն ընտրել տարածաշրջանի մի այլ երկրում՝ համապատասխան իրենց ազգութեան կամ կրօն. պատկանելութեան, որտեղ նրանք մեծամասնութիւն էին կազմում: Այդ մարդիկ պահպանում էին իրենց իրաւունքը անշարժ գոյքի նկատմամբ, բայց պարտաւորւում էին մէկ տարւայ ընթացքում իրենց շարժական գոյքը փոխադրել այն երկիր, որն ընտրել էին: Անօրինական էր յայտարարւում լքեալ գոյքի մասին օսմ. կառավարութեան 1915-ի օրէնքը: Թուրքիայում մնացող փոքրամասնութիւնների պաշտպանութիւնը, կեանքը, ազատութիւնն ու հուսաարութիւնը օրէնքի առաջ պէտք է ապահովելը կառավարութեան կողմից. «Պատերազմի ժամանակ Թուրքիայում մարդկանց նկատմամբ կատարւած վայրագութիւններ պատճառաւ չարիքն առաւելագոյն չափով քաւելու համար օսմանեան կառավարութիւնը պարտաւորւում է իր օսմանեան իշխանութիւնների կողմից ցոյց տալ ամէն տեսակ աջակցութիւն՝ 1914թ. նոյեմբերի 1-ից յետոյ անհետացած, առեւանգուած, ներկալւած եւ ազատագրւած ամէն ռասայի եւ ամէն կրօնի մարդկանց որոնելու եւ ազատելու համար»: «Պատիժներ» մասում թուրք. կառավարութիւնը ճանաչում էր դաշնակից տերութիւնների իրաւունքը՝ ռազմ. ատենանիւն հանձնելու պատերազմի օրէնքներն ու կանոնները խախտած մեղաւոր անձանց. համաձայնում էր նաեւ հանձնել այդ մարդկանց, ինչպէս եւ նրանց կատարած ոճրագործութիւնների վերաբերեալ տեղեկութիւններն ու փաստաթղթերը. «... Այդ անձինք պատասխանտու են կատարւած ջարդերի համար այն ժամանակ, երբ երկիրը գտնուում էր պատերազմի վիճակում այն տարածքում, որը կազմում էր թուրքական կայսրութեան մասը 1914թ. օգոստոսի 1-ին»: Դաշնակիցները կարող էին ատենան նշանակել այդ անձանց դատելու համար:

Պայմանաւորաժողովում ձեռք բերեց, որ Վրաստանը, Հայաստանը, Ադրբեջանը եւ Պարսկաստանը Բաթումի նաւահանգստով ազատ մուտք ունենան դէպի Սեւ ծով: Դաշնակիցները բարեացակամօրէն էին վերաբերում Կարսից ճորդիսի հովտով դէպի Բաթում «Հայկ. միջանցքի» գաղափարին, սակայն պայմանագիրը ստորագրելու պահին Վրաստանը դրա փոխարեն հայերին առաջարկեց երկաթուղի կառուցել Վրաստանի տարածքով: Եւ քանի որ դեռեւս յայտնի չէր Տրապիզոնի նաւահանգիստը Հայաստանի մէջ կմտցի թէ ոչ, ապա յատուկ հորւածով Հայաստանին երաշխաւորում էին տրանզիտային արտօնութիւններ ու այդ նաւահանգստի մի մասի առհավետ վարձակալութիւն:

Սինչեւ Ս. հ. պ-ի ստորագրումը պրեզիդենտ Վ. Վիլսոնի նշանակած յանձնաժողովը ուսումնասիրել էր տեղագրութիւնը, տնտեսութիւնը, տրանսպորտը, ջրային ռեսուրսները, առեւտր. ճանապարհները, ժողովրդագր. ու միւս խնդիրները, որոնք պէտք է հաշիւ առնէին սահմանները որոշելիս: Յանձնաժողովն իր

յանձնարարականները քննարկման ներկայացրել 1920-ի սեպտ., իսկ պրեզիդենտն իր որոշումը եւրոպ. տերութիւններին յանձնեց նոյեբերին: Նրա որոշման համաձայն, Հայաստանը պէտք է ստանար Վանի եւ Բիթլիսի նահանգների երկու երրորդը, Էրզրումի գրեթէ ամբողջ նահանգը. Տրապիզոնի նահանգի մեծ մասը՝ ներառեալ նաւահանգիստը: Ընդհանուր առմամբ այդ տարածքը կազմում էր մօտ 100 հզ. կմ<sup>2</sup>: Միաւորելով Անդրկովկասում արդէն գոյութիւն ունեցող Հայաստանի Հանրապետութեան հետ՝ հայկ. անկախ պետութիւնը կունենար շուրջ 160 հզ. կմ<sup>2</sup> տարածութիւն՝ դէպի Սեւ ծով ելքով:

Ս.հ.պ. կարող էր նպաստել Հայկ. հարցի լուծմանը եւ հայ ժողովրդին տրամադրել նրա ազգ. համախմբման համար բաւարար տարածք: Սակայն Ս.հ.պ. մնաց թողի վրայ: Այն չվաւերացրեց նոյնիսկ սուլբան. կառավարութիւնը: Քեմալականները դիմեցին դրա հաստատումը կանխող բոլոր միջոցներին եւ որպէս առաջին քայլ նոր արշավանք սկսեցին Հայաստանի Հանրապետութեան դէմ՝ այն ոչնչացնելու մտադրութեամբ: Յաջորդ տարւայ ընթացքում քեմալականները, օգտւելով միջազգ. նոր իրադրութիւնից, որը ստեղծել էր Խորհրդ. Ռուսաստանի եւ քեմալ. Թուրքիայի մերձեցման հետեւանքով, հասան Ս.հ.պ-ի վերանայմանը եւ փաստօրէն, նրա վերացմանը: Դա իր արտայայտութիւնը գտաւ 1923-ի Լոզանի պայմանագրում (տես *Լոզանի կոնֆերանս 1922-23*): Դաշնակիցները ճանաչեցին Ս. Քեմալի Անկարայի կառավարութիւնը եւ նրա իրաւունքը Արլ. Թրակիայի. Իգմիրի, Կիլիկիայի նկատմամբ, բոլոր այն տարածքների նկատմամբ, որոնք անցել էին Հայաստանին Ս.հ.պ-ով: Աւելին, նրանք ճանաչեցին Թուրքիայի նոր սահմանները, որոնք ընգրկում էին Արլ. Հայաստանի նախկին շրջանները՝ Կարսը, Արդահանը, Սուրմալուն: Դա Թուրքիայի լիակատար յաղթանակն էր: Պատմ. Հայաստանի մի փոքրիկ մասը շարունակեց գոյութիւն ունենալ որպէս Խորհրդ. Հայաստան, բայց հայերի մեծ մասը մնաց ցրած ի սփիւռս աշխարհի: Ս.հ.պ. այսօր էլ մնում է որպէս մի յուշագիր Հայկ. հարցի արդարացի լուծման հասելու հայ ժողովրդի իրաւունքի մասին: ■

**ԼՈՅՍ-ը ընդունում է 2եր գովազդներն ու յայտարարութիւնները**

*ԲՅանՆ<sup>3</sup> անձ՝ Կիւ Էա՛է »ն<sup>3</sup>µ<sup>3</sup>Ա՛Յ»ն՛Յ<sup>3</sup>  
 Կ՛ԷԻՅ՛ . »Օ՛ն<sup>3</sup>ն<sup>3</sup>ե՛ Շ »օ . ն՛Յ՛Յ՛ Կա՛Յ»Յ՛<sup>3</sup>  
 Թ<sup>3</sup>օ<sup>3</sup>Թ՛Յ<sup>3</sup>Յ՛Ց<sup>3</sup> 1<sup>3</sup>Ս՛ՍՃՅ՛Կ՛՛ճ՛ - Ը<sup>3</sup>  
 Ն՛Յ՛Յ՛ 3<sup>3</sup>ն՛Յ՛Յ՛Յ՛Յ՛<sup>3</sup>  
 Լոյս-ի խմբագրական խորհուրդ*

# Թեհրանահայ համայնքի պատմությունից

**Էդ. Բաղդասարեան**

Թեհրանը գտնուում է Էլբուրզի նախալեռներում, Դեմաւենդ լեռան ստորոտին, 1100-1700 մ. բարձրութեան վրայ: Հայկական Սովետական հանրագիտարանում նշել է, որ Թեհրանի մասին առաջին տեղեկութիւնները պատկանում են 12-րդ դ.<sup>1</sup>, սակայն պէտք է ուղղել, թէ այդ քաղաքի անունը առաջին անգամ մ.թ.ա. 2-րդ դ. յիշատակել է Թեոդոսիոսի կողմից որպէս Ռեյ քաղաքի արարձաններից մէկը<sup>2</sup>: Իրանական աղբիւնները նոյնպէս վկայում են, Թեհրանի վաղ շրջանի գոյութեան փաստը: 1722-ին քաղաքը աւերում են աֆղանները, սակայն այն կարճ ժամանակում վերականգնում է: 1785-ին Կաջարական հարստութեան հիմնադիր՝ Աղա-Մահմեդ խանը Թեհրանը դարձրել է Իրանի մայրաքաղաք:

Թեհրանի բնակչութիւնը 1843 թ. եղել է 106,482, 1922-23 թթ. 210,000<sup>3</sup>, 1968-ին՝ երկու միլիոն եւ 1976 թ. շուրջ միլիոն<sup>4</sup>, 1986-ին՝ 8.700.000 եւ 1991-ին՝ 9.982.000<sup>5</sup>:

Թեհրանը այսօր, կենտրոնական շրջանում ապրող հայ համայնքի կենտրոնն է հանդիսանում:

Թեհրանահայ գաղութը իր կուռ ամբողջութեամբ ստեղծում է 18-րդ դարի կեսերին, երբ Քարիմ խան Ջանդը Նոր Ջուղայից 10 տուն հայ քարակոփներ տեղափոխում է Թեհրան եւ բնակեցնում Թեհրանի արարձան՝ Դուլաբ գիւղում<sup>6</sup>, որտեղ գտնուում է թեհրանահայութեան ամենահին գերեզմատունը: Թեհրանում արդէն 1768 թ. ձեռնարկել են Ս. Թաղէու-Բարդուղիմեոս եկեղեցու կառուցումը<sup>7</sup>: Այս եկեղեցին գտնուում է «Քուչէ-Արամանէ»-ում («Գոգար Կարիբան») եւ «Բազարչէ Հազրաթ Արդուլագիմ»-ի միջատարածքում):

Աղա Մահմեդ խանը 1795-ին Վրաստանից ու Հայաստանից բերած գերիների մի մասին բնակեցնում է Թեհրան<sup>8</sup>: Կարաբաղի նահանգից եւս 5 տուն<sup>9</sup> հայ գաղթեցում է Թեհրան եւ տեղաբաշխում Դարազէ Դազիին թաղամասում, ուր թիֆլիսահայ երկու գերդաստան էին բնակութիւն հաստատել՝ Յովսէփեաններն եւ Ստեփանեանները: Սոյն թաղի նախկին

մատուռը՝ Ս. Գետրգը 1790-95 թթ. կառուցել է գլխաւորապէս այս երկու ընտանիքների ծախսերով եւ որը 1882-ին ընդարձակել է:

Ֆաթալի շահի գահակալութեան օրօք երկրի զանազան շրջաններից հայեր սկսեցին փոխադրել Թեհրան, շահի հրամանով Նոր Ջուղայից, Թարիզից հայ ահրեստաւորներ են բերում մայրաքաղաք<sup>10</sup>: 19-րդ դարում հայերը գլխաւորապէս Շահ-Արդուլ Ազիմ թաղամասում էին բնակուում, սակայն Դարազէ Դազիին թաղամասի եւ քաղաքի զանազան մասերում եւս հայեր էին բնակուում: Նրանք աստիճանաբար հաստատուում էին նաեւ Դարազէ Դուլաթում, Հասան Աբադում եւ Թեհրանի այլ շրջաններում<sup>11</sup>:

Այսպիսով, Թեհրան քաղաքի զարգացմանը զուգահեռ երկրի տարբեր մասերից սկսեց հայերի հոսքը դէպի Թեհրան: Այս երեւոյթի հիմքում է նաեւ գիւղերի աստիճանաբար քայքայման պատճառը: Բազմաթիւ շինականներ էին գալիս աշխատանք գտնելու յոյսով:

1918-1921 թթ. քաղաքի հայ բնակչութիւնն աւելացաւ ի հաշիւ միջազգայն ու Վան-Վասպուրականի փախստականների եւ Կովկասի բնիկների<sup>12</sup>:

Հայ ընտանիքների հոսքը Թեհրան իրագործել է ի հաշիւ գաղութի հին կենտրոնների՝ Թարիզի, Կարաբաղի, Նոր Ջուղայի, Համադանի, Ռաշաի, Էնզելիի, Դազիինի, Սպահանի գաւառի, Բուրառի, Գեափլա, Քեամարա եւ Քեազազ շրջանների հայ-կական բնակչութեան, ինչպէս նաեւ Կարաղանի շրջանի: Թեհրանահայութեան թիւը տարբեր տարի-ներին այդպէս է եղել<sup>13</sup>:

- 1851 թ. 31 մարդ
- 1857 թ. 551 մարդ
- 1871 թ. 750 մարդ
- 1880 թ. 1177 մարդ
- 1903 թ. 1450 մարդ
- 1914 թ. 2905 մարդ
- 1922 թ. 3447 մարդ
- 1944 թ. 25000 մարդ
- 1947 թ. 36000 մարդ
- 1950 թ. 39150 մարդ
- 1953 թ. 41850 մարդ
- 1956 թ. 57000 մարդ
- 1959 թ. 65000 մարդ
- 1978 թ. 110000 մարդ
- 1993 թ. 80000 մարդ

<sup>1</sup> ՀՄՀ, հ.4, էջ 163:

<sup>2</sup>

<sup>3</sup> Պարսկահայ տարեցոյց, Թեհրան, 1927, էջ 39-40:

<sup>4</sup>

<sup>5</sup>

<sup>6</sup> Նազար Գորոնեանց, Պարսկաստանի հայերը, Թեհրան, 1968, էջ 295:

<sup>7</sup> ՀՄՀ, Հ. 4, էջ 164:

<sup>8</sup> Նազար Գորոնեանց, նշ. աշխ., էջ 296:

<sup>9</sup> Հրաչեա Աճառանը իր յուշերում խօսելով թեհրանահայութեան մասին 7 ընտանիք դարաբաղցիների մասին է հաղորդում:

<sup>10</sup> Նազար Գորոնեանց, նշ. աշխ., էջ 295:

<sup>11</sup> «Այիք» 1957, հոկտեմբերի 28:

<sup>12</sup> Մերձատր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, հ. 4, Երեւան, 1969, էջ 152:

<sup>13</sup> «Պարսկահայ տարեցոյց», Թեհրան, 1927, էջ 39-40:

«Վերածնունդ», Թեհրան, 1944 յունիսի 13:

«Արաքս», Թեհրան, 1993, թիւ 54 ապրիլի, էջ 12:

«Ըրաֆի տարգեհիլը», Թեհրան, 1969, էջ 268:

«Այիք», Թեհրան, յունիսի 5:

1993 թ. 80000 մարդ

# Արտագ-Մակու գաւառը եւ սուրբ Թադէի վանքը

(Շար. նախորդ համարից)

Սերոժ Թիլիմեան

Ա. Թօխմախեանը «Մասիս լեռների հարաւային ստորոտները» գրքում Վարդանանց պատերազմի դաւաճանների մասին պատմում է հետեւեալ աւանդութիւնը:

«Աստուած» ասում է ժողովուրդը, «սե կարիճ չէ ստեղծել. այդ զգուելի մահուց միջատները դաւաճանների, ազգութեանների գերեզմանաններիցն են գոյացել»..... «Դաւաճանները մեռան» աւել ցնում են նոքա, «բայց մեզ ժառանգութիւն թողին իրեանց գոյացած կարիճները, որոնք մեզ միշտ խոցոտել, մահացրել են»: Թօխմախեանի վկայութեամբ նման կարիճներ գտնուում են աւերակների մէջ: (նշւած աշխ. էջ 56):

Գ. Շերմազանեանը «Արարատ» ամսագրի 1872 թ. դեկտեմբերի համարում, պատմում է հետեւեալ աւանդութիւնները եւ սովորութիւնները:

Արտագ գաւառի Սառական կիրճի շրջակայքում ապրում է մի տեսակ այծեան, որի պորտից հանում են մուշկ ասած քարացած արիւնը եւ դեղի համար շատ թանկ ծախում Ասիայում. «Այդ մուշկի վերայ շատ առասպելներ կան հնարած,- գրում է նա,- շատից մինը ասենք, ըստ որում Վարդանանց պատերազմից յետոյ է յայտնուած, ասում են, էս քարացած արիւնը այծեանների պորտի վերայ, վասնորոյ եւ ի շնորհս էն սուրբերին է էս յառաջ եկած. այսինքն՝ ինչ այծեաններք օր (ըստ այլոց 7 օր) արածել է էնտեղ, ուր նահատակուել են Վարդանանք, նրանք արիւնի շնորհքովն է բաղկանում այծեանի պորտի վերայ էն արիւնը ու լինում բժշկութիւն անտաժետաց եւ այլն»: Նոյն հեղինակը վկայում է նաեւ որ Թադէու Առաքեալի վանքի վարդապետների մէջ հին աւանդութեամբ, սովորութիւն է եղել Կարագիատիննի մօտակայքից անցնելիս Վարդանանց նահատակութեան շարականը երգել:

Մակու եւ Բայազիտ քաղաքների մէջ կառուցւած է եղել Ս. Վարդանի անունով եկեղեցիներ. այդ վայրի հայերը սովորութիւն են ունեցել տարւայ ընթացքում մի շաբաթ կամատր պաս պահել սուրբ Վարդանի անունով, հոկտեմբեր ամսի վերջերը. «էս պասն,- գրում է Շերմազանեան,- պահում են մինչեւ ցայսօր էն տեղրանքից գաղթուած Ռուսաստան հայերը»:

Սոքմանաւան գտնուում է Մակի շրջանում. ըստ աւանդութեան սա եղել է Խանդութխանումի երկիրը: Մասունցի Դարթի գուրզն այստեղ գետինը պատռելով գնացել է առաջ: Այն օրւանից էլ այս վայրը կոչւել է Սոքման (ճեղքւած, քանդած)աւան:

«Աւանդապատում» Ա. Ղանալանեան էջ 187

Մակու քաղաքի սուրբ Վարդան եկեղեցու մասին պատմել են հետեւեալը, Մակի հայերը մի ժամանակ

ապրել են լինում քաղաքի թուրքական թաղամասում, այստեղ էր նաեւ նրանց սուրբ վարդան անունով եկեղեցին: Երբ մակեցիք հաստատուում են «մահլում», այստեղ իրենց համար նոր եկեղեցի են կառուցում նոյն անունով: Վարդան գորավարը մէկին երագում ասում է «Դուք ինձ թողիք անօրի (անօրէն) ձեռք, ես էլ պտի չուրք դնեմ վարեմ ձեր տուն ու տեղը»: Ասում են, թէ այդ անէծքն է եղել պատճառը, որ կոտորածների ժամանակ Մակուի հայկական թաղամասը ամբողջապէս ոչնչացել է:

«Աւանդապատում» Ա. Ղանալանեան էջ 248

Արտագում ինչպէս հայաբնակ այլ վայրում նշանատր ուխտատեղիներից եւ վանքերից գատ եղել են նաեւ երկրորդական պաշտամունքի վայրեր, ինչպէս քանդած եկեղեցիների վրայ կառուցւած մատուռները, ժայռերի մէջ գտնուող ծերպերը ուր ճրագ եւ մոմ են վառել ու խունկ ծխել. նոյն նպատակի համար են օգտագործուել ջերմախտի ջրերը, որտեղ լողացել են ջերմողները եւ ծառերը՝ որոնց ճիւղերին կապել են հանդերձից պատռւած կտորներ եւ գլխից կտրւած մազերի փնջեր, այս բոլորը անւանել են «թուխ- մանուկ»:

## Շեքիքներ Մակուի բարառով

(Ա. Ղայկունի, «Ժողովրդական առակներ», Վաղարշապատ, 1907 էջ 59-60)

### Բազէն ու մուկը

Թառլան<sup>1</sup> կուշն ու մուկը աղբէր էին դարձեր. չոյի<sup>2</sup> մէջ պտըտումին. էն մէկ օր թառլանը ասաց մնակ:- Դու ման գալով հոգիդ էլեր ա. որի իմ թեւերի վրէն, բանձրձնեմ երկինքը. իշկայ, տե՛ս. աշխարքումը ինչ կայ: Շատ բանձրցան- չուր օխող թապախա<sup>3</sup> երկինքը:

Ասաւ թառլանը.- Աշխրքին ինչ էս տենը.- Մագ(դ)ի պար<sup>4</sup> էմ տենմ, դու իմալ էս տենըմ:

-Ըմեն բան իմ աչէի դեմնա, դու էլախալ<sup>5</sup> ինչ շուտ աչքից ընկար, ես մէ ջոջ քաղաքմն տենմ. քաղաքից դուս մէկ ցանք անող էմ տենըմ, որ երկու եզ ունի. մէկ եզ քեմեր<sup>6</sup> ա. մէկ էլ կարմիր ա: Վարեց, մկայ ցանք ա անըմ. խերմ ցանըմ. սրեմն էլ ա կտաւատ. մէկ ճնճուղ էկաւ որ սերմ ուտեր. մէկ խարտալ (մանանեխ) թռաւ, ճնճրղայ աչքը ընկաւ:

Շար. էջ 15

<sup>1</sup> Բազէ, ուրուր

<sup>2</sup> դաշտ

<sup>3</sup> յարկ

<sup>4</sup> հաւասար

<sup>5</sup> յանկարծ

<sup>6</sup> խայտ

Արժանատի Հոգեւորականը  
**Տ. Յարութիւն Աւագ**  
**Քահանայ Տէր Մեսրոպեան-**  
**Բալայեան**

(Իր վախճանման 20- ամեակի առթիւ)

Յարութիւն Աւագ Քինյ. Տէր Մեսրոպեան-Բալայեանը ծնել է 1896 թականին, Վանի Թիմար գաւառի Կոմս գիւղում Քահանայի ընտանիքում: Մանուկ հասակից մտել է Լիւ Անապատի Ս. Գէորգ Վանքը, որտեղ ստացել է հոգեւոր կրթութիւն: Առաջին Աշխարհամարտի նախօրէին, անցել է հայկական ինքնապաշտպանութեան բանակի մէջ ու մասնակցել է բազմաթիւ օրհասական մարտերի: Վանի հերոսամարտի օրհասական պահին, հայրենիքի փրկութեան սրբազան դատին իր նիւրումը բերելու համար զինուորագրելու էր ինքնապաշտպանութեան խմբերի մէջ եւ ճակատել թուրք հսկայական բանակների դէմ: Սակայն, ռուսական բանակների հեռացումով, Վանի հայութիւնը ստիպւած ընտրում է նահանջի ճանապարհը:

1918 թականին, Վասպուրականի տարագիր հայութեան հետ գաղթել է Միջագետք, ուր զբաղւել է ուսուցչութեամբ եւ Սարկաւազի պաշտօն ստանձնել հայոց եկեղեցիներում: 1924 թականին մեկնել է Մայր Հայրենիք, իսկ 1931 թականին վերադարձել է Իրան:

1932 թականին Հոկտեմբեր 2-ին, Ատրպատականի հայոց ժամանակի Առաջնորդ Երջանկայիշատակ Տէր Ներսէս Ս. Արք. Մելիք Թանգեանի միջոցով Թարիգում ձեռնադրուել է Քահանայ, եւ մի քանի ամիս Ուրմիոյ շրջաններում պաշտօնավարելուց յետոյ, գործուղել է Ղազիւն, ուր մնաց մինչեւ իր ցաւալի մահը:

Ղազիւնում Տէր Հայրը ունեցաւ բեղուն գործունէութիւն: Եռանդով լծւեց շինարար աշխատանքի: Իր ջանքերով 1936 թականին կառուցեց Ս. Հռիփսիմէ եկեղեցին ու եկեղեցու պատկան շէնքը, ազգային շէնքը օծուեց ծառագարդ պարտէզով: Հէնց սկզբնական տարիներից եղաւ կրօնի եւ պատմութեան դասատու Ղազիւնի ազգային «ՐաՖՖի» դպրոցում: Աշխատակցեց հայ մամուլին կրօնական, յուշագրական յօդածներով ու թղթակցութիւններով: Դրի առաւ իր կեանքի յուշերը մի քանի հատորով, որի Ա. հատորը լոյս տեսաւ 1949 թականին: Որպէս անձնէր, շիտակ եւ տիպար հոգեւորական, միշտ մնաց իր ժողովրդի հետ, եւ ամենադժարին պայմաններում երբէք չքեց ի հօտն ու ժողովուրդը:

1971 թականին ձեռնադրուեց Թեմակալ Առաջնորդի պարգեւորեց Քահանայական լանջախաչով, իսկ 1973 թականին ստացաւ Աւագութեան աստիճան: Տէր Հայրը հակառակ իր առաջացած տարիքին, մինչեւ վերջ՝ օրը օրին հետեւում էր ոչ միայն Ղազիւնի այլ ամբողջ հայ ազգային կեանքին, եւ հարկ եղած պարագային իր ուրոյն եւ քաջարի կեցածքով կենդանի օրինակ էր հանդիսանում իր շրջապատի եւ յատկապէս երիտասարդութեան համար: Համաշխարհային Երկրորդ Պատերազմի եւ նրան յաջորդող խառն տարիներին, յայտնի են նրա կտրուկ եւ վճռական միջամտութիւնները եւ միջամտութիւնները եւ միջոցառումները, որպէս

հոգեւորական՝ յօգուտ դազիբահայ համայնքի, եւ ինչու չէ, վերջին հաշուով նաեւ իրանահայութեան կրթական-մշակութային իրաւունքների: Վերջին նմուշը կարելի է յիշել Տ. Յարութիւն Աւագ Քահանայի հինգ էջանոց կրօնաշունչ, կուռ եւ տրամաբանակ նամակը, ժամանակին ուղղած Իրանի Առաջնորդ Էմամ Խոմէյնիին, բողոքելու համար հիմնական օրէնքի առաջին նախագծի մէջ իրանահայութեան իրաւունքների որոշ սահմանափակումների դէմ:

Ինչպէս գիտէնք, հիմնական օրէնքի 2-րդ վաւերացած նախագծում վերացան այն կէտերը, ըստ որի Իսլամական Հանրապետութեան նախարար կամ վարչապետ դառնալու համար նախապայման է մահմետական լինելը:

Վերջում տեղին ենք համարում յիշելու որ նրա մահուան առթիւ հոգեհանգստեան արարողութիւններ կատարեցին Թեհրանի Ս. Աստուածածին եկեղեցում, ուր հանգուցեալ Տէր Հօր մասին խօսեց Թեհրանի Առաջնորդ Գերշ. Տ. Արտակ Արք. Մանուկեանը եւ Նոր Ջուղայի Ս. Աստուածածին եկեղեցում, ուր հանգուցեալի մասին քարոզ խօսեց, Իրան- Հնդկաստանի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Կորիւն Եպիս, Պապեանը եւ ի միջի այլոց ասաց.

«Ջբարոք պատերազմ պատերազմեցայ, զընթան կատարեցի, զիստատն պահեցի: Այսուհետեւ կը մնայ ինձ արդարութեան պասկն, գօր հատուցէ ինձ Տէր յատր յայն մէկ արդարն Դատատր, ոչ միայն ինձ, այլեւ ամենեցուն որ սիրեցին զայստնութիւն նորա»:

«Պօղոս Առաքեալի, Աւետարանում արտայայտած այս խօսքերը լիովին համապատասխանում է Տ. Յարութիւն Աւագ Քահանայ Տ. Մեսրոպեան- Բալայեանի կեանքի ընթացքին, գործունէութեան եւ վախճանին»:

Հոգեհանգստեան արարողութիւն տեղի ունեցաւ նաեւ Լոս Անճելիսի Գլէնտլի Ս. Աստուածածին եկեղեցում: Ամենաայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.-ի կարգադրութեամբ. Ս. Էջմիածնի Մայր Տաճարում վեհափառի նախագահութեամբ հոգեհանգիստ կատարեց:

1983 թին հոգեւոր Տ. Յարութիւն Աւագ Քահանայի անդրանիկ որդին հոգեբան Դոկա. Մեսրոպ Բալայեանը դասաւորեց եւ խմբագրեց Տէր Հօր «Յուշեր»ի Բ. հատորը եւ բարձր տպաքանակով լոյս աշխարհի հանցեց այդ խիստ արժէքաւոր գիրքը, որն կէս դարու պատմութիւն է Իրանի Ղազիւն քաղաքի հայ համայնքի: Գրքի մէջ կան բազում նկարներ, որոնք առնչում են Ղազիւնի եկեղեցուն, դպրոցին եւ մի շարք ազգայինների:

Այստեղ պիտի նշել որ բարեյիշատակ Տէր Հայրը միշտ հաւատարիմ իր հոգեւոր կոչումին, մշտական կապի մէջ եղաւ մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ նրա արժանատի գահակալ Երանաշնորհ Տ.Տ. Վազգէն Առաջին Վեհափառի հետ: Տէր Հօր մահով Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին, Ի՝ մասնատրի իրան ահայութիւնը կորցրին իրենց արժանատի եւ նւիրեալ սպասարկուներից մէկին:

Այս տարի Յուլիսին լրանում է արժանատի հոգեւորականի վախճանման 20-րդ տարին:

Ղազիւնի Ս. Հռիփսիմէ եկեղեցու բարերարները եւ Հոգեւոր Հովիւր վաղուց անցել են պատմութեանը, բայց կանգուն է եկեղեցին վառ ու պայծառ վիճակում: ■

## Նոր ուղղագրութեան ամենակարեւոր կանոնները

### (Շար նախորդ համարից)

Եթէ ձայնարկութիւնները նախադասութեան միւս անդամներից միշտ անջատուում են ստորակետով, ապա վերաբերականները կատրող են չտրոհել, եթէ բանաւոր խօսքում նրանք դադարով չեն անջատուում նախադասութեան այլ անդամներից: Այդպէս է հատկապէս այն դէպքերում, երբ վերաբերականը առնչուում է ոչ թէ ողջ նախադասութեանը, այլ նախադասութեան որեւէ անդամի:

Արամը իհարկէ կը բերի այդ գիրքը:

Իրօք Արտակն է գնացել անտառ, այլ ոչ թէ Տիգրանը:

Նրա առանձնատունը իսկապէս գեղեցիկ մի վայրում էր գտնուում:

5.Կոչականի եւ նախադասութեան հիմնական մասի միջեւ:

-Ճա՞նճ ես բռնում, Ափրէ՛:

-Օրի՞որդ, դուք որեւէ բան կորցրե՞լ էք:

-Ո՛չ, տղա՛ս, տակաւին կարող եմ քայլել:

-Կը կամենայի՞ր, մեծափա՛ն, այժմվանից իսկ հանգստանալ:

Յիշէք, որ կոչականն այն բառն է, որ ցոյց է տալիս, թէ ում կամ ինչին է ուղղած խօսքը:

6.Կրկնող եւ...եւ՛, թէ՛... թէ՛, ո՛չ... ո՛չ, կա՛մ...կա՛մ շաղկապներով սկսող բազմակի բառերի եւ նախադասութիւնների միջեւ:

Քնած էին եւ՛ ամրոցը,եւ՛ մարդիկ, եւ՛ ծառերը, եւ՛ անդրնդախոր վիհը:

Նա եւ՛ արտասել էր ուզում, եւ՛ ժպտալ:

Այժմ նրա ո՛չ խորին պատկառանքը, ո՛չ որդիական անկեղծ սէրը չէին կարող մոր սրտից ջնջել արմատացած վիշտը:

Նա սկսեց դիտել ճակատամարտը, կարծես ո՛չ գլխատր հրամանատարն էր, ո՛չ էլ դա իրեն էր վերաբերում:

Հարցում արեց թէ՛ հորդառատ գետերին, թէ՛ սառնորակ աղբիւրներին, թէ՛ սաղարթախիտ անտառներին եւ թէ՛ ձիւնածածկ լեռներին:

Տանտէրերը կա՛մ իջել են ներքեւ ու քիչ թէ շատ արգաւանդ հողերում նոր տներ կառուցել, կա՛մ ընդհանրապէս չէլ են:

7.Տրոհած հետադաս որոշից յետոյ:

Այդ կինը՝ առողջ կազմածքով, գրկւած էր Աստուծու շնորհած մեծագոյն բարիքից:

Երեսաց ամրոցը՝ իր սպիտակ պարիսպներով եւ հզոր աշտարակներով, եւ հիացմունք պատճառեց ճամփորդներին:

8.Մասնական ու պարագայական մասնաւորող բացայայտիչների եւ նխադասութեան միւս անդամների միջեւ:

Մասնական բացայայտիչը հատկանիշը առարկային վերագրում է մասնաւոր առումով: Այն ձեւաւորում է որպէս, իբրեւ կապերով:

Արտակը, իբրեւ գորախմբի հրամանատար, մասնակցում էր աագների խորհրդին:

Արամին, որպէս առաւել հեղինակաւոր մարդու, ուղարկեցին խռովարարների հետ բանակցութիւնների:

Մասնաւորող պարագայական բացայայտիչը լրացնում է պարագային, մասնաւորում նրա իմաստը:

Յաջորդ օրը, երեկոյեան, բարձրացայ շոգեմաւ:

Ծառերի տակ, գետնի երեսին, թփուած էին մետաքսագգեստ փշաւաները:

Լճի մօտ, բարձրադիր ժայռի վրայ, կանգնած էր մի մարգ:

9.Բուն բացայայտից յետոյ:

Բայց Բեկը՝ այդ զգոյշ, շրջահայաց զինուորը, կարծես ուշադրութիւն չէր դարձնում:

Հայաստանի քահանայապետը՝ հայրենիքի հզօր պաշտպան Ներսես Մեծը, յունաց կայսրի հրամանով արտուրած էր Պատմոս անբնակ կղզին:

Երկու տակալի տարերք՝ կրակը եւ քամին, կարծես միաբանել էին մի սերտ դաշնակցութեամբ:

Բուն բացայայտից յետոյ ստորակէտ չի դրուում հետեւեալ դէպքերում:

ա)երբ բացայայտիչը դրւած է սեռական հոլովով:

Ներսես հայրապետը վերահաս եղաւ իր տեղապահի՝ սուրբ Խաղի գործերին:

Գիւցազն արքայորդին լսեց իւր հոր՝ Սմբատ արքայի նահատակութեան լուրը:

բ) երբ բացայայտիչի հետ գործածուած է կապ:

Յաղթողի՝ Վարդանի մասին բոլորը հիացմունքով էին խօսում:

Իր մտերիմ ընկերոջ՝ Սերոբի հետ նա ձեռնարկել է կարեւոր գործ:

գ)երբ ստորոգեալի հանգոյցը կամ օժանդակ բայը շրջուն շարադասութեամբ դրուում է բացայայտից յետոյ:

Այդ ամառ երկու թռռները՝ Յովհաննէսն ու Սեդրակն էին օգնում Յարութ քեռուն խոտհնձի ժամանակ:

Պարզեց, որ Գեորգը՝ հօրեղօր որդին էր այդ ամէնի պատճառը:

**Շար. 8**

### Շար էջ 13-ից

Երկինքը պըտըտել էր իջեցրեց գետինը. ինքը գնաց շիբարի (որսի). բանձրացաւ սարի գլօխ. կեսաւ բան դրուկ. իջաւ վրէն ու ընկաւ թռռի մէջ:

Մուկն իշկաց- իշկաց, չէկաւ թառանը, պտըտեց, տեսաւ թռռի մէջ ընկուկ.- Աղբէ՛ր, ասաց, էրկինք- գատանց ճնճոյ աչքի խարտալը տենըմիր. էդ մեծ թռռը ի՛մալ չտեսար: Աղբէ՛ր, ասաց. էն վախտ Աստուած ընձի թարիքար<sup>7</sup> է՛ր, աչքս բաց էր. մկա Աստուած ընձնից առաւ. աչքս կապուաւ. մկայ ճար ունիս, ճար արա՛:

Մուկ շրիթներ կտրեց.- Գնա՛ ասաց, Աստուած քե խես:

8.-պարան.

**Շար. 9**

<sup>7</sup> Աստուծոյ կողմէն յաջողութիւն

Մաշքեճի ժողովը ամենալավ երաժիշտ է՝ ցույց տալով

Ժամանակին մի ծեր նապաստակ կար, որ շատ ձագեր ուներ: Մի օր, երբ տանից դուրս ելավ, տեսավ որ տան չորս կողմը աղւեսներ են վագում:

Ձիւնը գլխիս.- ասաւ, հիմա ի՞նչ պիտի անեմ, ի՞նչպէս ձագերիս պաշտպանեմ:

Հայրիկ նապաստակը շատ խելացի էր և փորձառու: Նա իսկոյն մի տախտակ վերցրեց և սկսեց վրան բաներ գրել:

Ծեր նապաստակը տախտակի վրայ մի փայտ փակցրեց և տարաւ իր բոյնի առջևը տնկեց, և սուս ու փուս վերադարձաւ իր բալիկների մօտ:

Աղւեսը երբ այնտեղից անցաւ, տեսաւ և կարդաց.

«Մյստեղ է ապրում մեզ բոլորիս յայտնի անյաղք շունը, ով որ աղւեսի կամ գայլի տեղ գիտի, թող լոր տայ»:

-Վա՛յ . տունս քանդուց, գոռաց աղւեսը. և լեղապատառ փախաւ միւս աղւեսների մօտ: Ա՛յ կնի՛կ, տղերք, շուտ բոլորդ հաւաքէք, մեր թշնամի շունը եկել և հաստատել է մեր հայրենիքում: Քանի շուտ է գնանք, որ մեր գլխին փորձանք չզայ:

Փոքրիկ նապաստակները տեսնելով աղւեսների սարսափահար փախուստը՝ ուրախութեամբ գոչեցին.

-Կեցցէ՛ մեր հնարագէտ հայրիկ:

\*\*\*\*

Հարց: Ի՞նչ հնար կգտնէիր դու, եթէ լինէիր հայրիկ նապաստակը:

\*\*\*\*

Ժայիրներ

Ուսուցիչ.- Գեղամ, կարո՞ղ ես թարկել որոշ բաներ, որոնք գոյութիւն չունենին հարիւր տարի առաջ, բայց կան այսօր:

Գեղամ.- Անշուշտ, օրինակ դուք և ես ...

\*\*\*\*  
2 Մ»ՅՅԻՅՅՅ

Ամենալաւ ուղեկիցը

Գիրքն է

Ամենալաւ խաղալիքը

Միտքն է

Ամենալաւ օգնականը՝

Չանքը:

Ամենալաւ բարեկամը՝

Կամքը ...

ԾՅ Կ»ԻձՕԻ Կ»՛՛


Պէտք է գալիս ամենուր,  
Կեանքի ամէն թոհուրոհում:  
Ունը շատ է՝ չի պարծենում  
Ունը քիչ է՝ չի դժգոհում:

Ճիգով

Չորս կողմը՝ ջուր,  
Մէջտեղը հուր:

սգոցճցվ

\*\*\*\*



Գտէք « Ս » և « Թ » տառերով սկսող պատկերները:

ՕՇՕԿ

Գեղամ Սարեան

Ձիւն, փափուկ ձիւն, սպիտակ ձիւն  
Իջիր դու մեր դաշտերին,  
Ծաղիկ, հատիկ մտել են քուն  
Հողում գըտած անկողին:

Հանդարտ, կամաց, իջիր այնպէս,  
Որ չը մըրսեն, չարթնանան,  
Ծածկիր նըրանց քնքուշ ու հեզ,  
Զգոյշ, զգոյշ անսահման:

Ձիւն, փափուկ ձիւն, սպիտակ ձիւն  
Հանդարտ, խաղաղ իջիր վար,  
Ծաղիկ, հատիկ մըտել են քուն  
Հողի գըրկում դավկահար:

Էջը պատրաստեց Արմինէ Բարումեանը

# Ինչպե՞ս է ազդում աստման բորքերին



Ինչո՞ք բարգմանեց՝  
Լևոն Առաքունեանը

## Աստմայի առաել յաջող վերահսկման ռազմավարություն

Աստման շնչառական համակարգի մի խրոնիկ, յառաջացող իրավիճակ է, որն կարող է ուշադիր վերաբերմունքի: Աելի քան 17 միլիոն ամերիկացիներ տառապում են աստմայով. դրանց 10 տոկոսը- 1.5 միլիոնից աելին է 65-ից վեր տարիք ունեցող անհատներ են: Իսկ այդ հիւանդութեամբ մահացողների մեծամասնությունը կազմում են մեծահասակները: Շատ բարձր տարիք ունեցող հիւանդների ախտանիշները հակառակ են լինել առաել յաճախակի, իսկ գոյակցւած առողջապահական այլ վիճակները, աելի քան բարդացնում են բուժման գործընթացը, այսպիսով շեշտադրելով պատշաճ խնամք տանելու կարեւորությունը:

Կան բուժման այլազան միջոցներ, սակայն դրանց միջից լաւագոյն բաղադրութիւնն ընտրելու եւ օպտիմալ գործադրութեան դնելու համար կարիք է զգացնում լաւ յարաբերութեան մէջ լինել ձեր բժշկի հետ, իսկ, հարկ եղա՞ծ պարագայում դիմել մասնագէտի խնամքի:

## Ի՞նչ է աստման հիմնականում

Աստման բորքը շնչառական մի հիւանդութիւն է, որն ախտահարում է բորքերի ու շնչառական ուղիները: Չնայա՞ծ, որ յայտնի չէ դրա գոյացման պատճառը, սակայն ենթադրում է, որ աստմայի պատճառ կարող է հանդիսանալ կենսոլորտային եւ գենային ազդակների մի խառնուրդ:

Աստմատիկ հիւանդների բորքերն արտասովոր զգայնութիւն ունեն գրգռիչ ազդակների հանդէպ, ինչպիսիք են փոշի, բորբոսը, մագոտ տնային կենդանիները, սաւիթիինը, մարմնամարզը, սառ օդը եւ այլն: Այս կարգի, այսպէս կոչւած խթանները եւ ձգանները (triggers) բորքոքում, ապա պրկում են շնչուղիները: Բացի այդ, յաճախ լորձնքակալում են շնչուղիները, ինչը աելի քան նեղացնում է դրանք՝ դժարացնելով շնչառութիւնը: Աստմայի միջադէպերն սկսում են կամ աստիճանաբար, կամ էլ յանկարծակի եւ տեւում են սկսա՞ծ մի քանի րոպէից մինչեւ մի քանի ժամ:

Միջադէպներ, որ խթանում են ճանաչա՞ծ, յայտնի միջոցներով, կլիմայական պայմաններով կամ որոշակի Ֆիզիկական աշխատանքներով կոչւում են արտաքին աղբիւրի ասմա եւ սովորաբար երեւան են գալիս նախքան 30 տարիքը եւ հաւանաբար առնչւում են ալերգիայի ընտանեկան անցեալին, Իսկ երբ հնարաւոր չի լինում յայտնաբերել աստման խթանող ստոյգ խթաններ, իրավիճակը ճանաչւում է ներքին աղբիւրի, ոչ-ալերգիական կամ աստուպիկ (atopic) աստմա անունով: Թէպէտեւ ներքին աստման կարող է ի յայտ գալ ցանկացա՞ծ տարիքում, այն սովորաբար սկսում է հասունութեան տարիքներում: Հետազօտութիւններն ցոյց

են տել, որ բարձր տարիքում սկսա՞ծ հիւանդութիւնը, մե՞ծ մասամբ պատկանում է աստմայի ներքին տեսակին: Այդուհանդերձ վերջին փաստարկները յուշում են, որ որոշակի դէպքերում դեր ունեն նաեւ ալերգենները (allergens): Աստմայի ընդհանուր ախտանիշներն են խզգալով շնչառութիւնը, շնչարգելութիւնը, կրծքավանդակի սեղմանը (մասնաւորաբար սառն օդում եւ մարմնամարզի ընթացքում), պարբերական բնոյթի հազը, որի տեսողութիւնը կարող է լինել մէկ օրից մինչ մէկ շաբաթ: Բնորոշ է անգոյն, մա՞ծուցիկ լորձունքը:

Անհրաժեշտ է կատարել ճշգրիտ ախտորոշում նոյն ախտանիշներ դրսեւորող այլ հիւանդութիւններից աստման տարազատելու համար, որոնց թում կարելի է նշել խրոնիկ բրոնխիտը, ամֆիզեման, սրտի վատ աշխատանքի հետ կապւած աստմայանման վիճակը, սրտամկանի ischaemia (սննդի անբաւարարութիւն) եւ թոքային ամբողիզ (մակարդակ արեան կոյտ):

Աստմայի մեղմ տեսակը, սովորաբար, հնարաւոր է ախտորոշել եւ բուժել նախնական խնամքի բժշկի միջոցով: Սակայն մի քանի ուսումնասիրութիւններ ցոյց են տել, որ միջին եւ ուժգին աստիճանի աստմայի դէպքերում հիւանդներն աելի քիչ աշխատօր են կորցնում, առաել կարճ են մնում շտապ օգնութեան կայաններում կամ հիւանդանոցներում եւ առաել սակաւ միջադէպեր են ունենում, երբ բուժումը կատարւում է մասնագէտի միջոցով: Մասնագէտի խնամքին պիտի դիմել նաեւ այն դէպքերում, երբ ախտանիշները հարկ եղա՞ծին պէս չեն ընթանում դէպի բարելաւում:

Հիւանդութեան ճշգրիտ գնահատականը կատարւում է բժշկական արխիւի լիակատար ուսումնասիրութեան, քթանցքի եւ լորձաթաղանթի արտաթորումների տարրալուծման, բորքերի աշխատանքը ստուգող քննութիւնների (որպէսզի հնարաւոր լինի ճշտել շնչառական ուղիների անարգել աշխատելը), էլեկտրօ-կարդիոգրաֆիայի, իսկ երբեմն էլ ալերգիան յայտնաբերող տեստերի: Աստմայի առկայութիւնը հաստատւած դէպքում, բուժումը պիտի սկսի դեղորայքի միջոցով:

## Աշխտանիշների արագ մեղմում

Սուր արտայայտող ախտանիշներն կարելի է արագ վերացնել- նոյնիսկ կանխել- բրոնխները լայնացնող (Bronchodilators) դեղերով, որոնք թուլացնելով շնչուղիները շրջապատող մկանները նպաստում են դրանց լայնանալուն: Այդ դեղամիջոցները մարմնամարզից առաջ առնելով հնարաւոր է կանխել աստմայի ախտանիշները: Բժիշկը bronchodilator-ները սովորաբար նշանակում է շնչաղիմակի (inhalor) միջոցով փոշիացա՞ծ հեղուկի ձեւի տակ (aerosol): Բացի այդ, կան նաեւ դեղահատիկի, կապսուլի կամ էլ հեղուկ պատրաստուկներ:

Բրոնխները լայնացնող դեղերի հիմնական տեսակներն են Բետա 2 ագոնիստները (Beta 2 agonists), anti-cholinergics-ները եւ mrxthylxanthine-ները: Beta 2 agonists-ները ամենից արագ ազդող եւ ամենից յաճախակի նշանակւած դեղերն են, որոնք 5 րոպէում- կամ նոյնիսկ աելի արագ- լայնացնում են շնչուղիները եւ բաց պահում մինչեւ 6 ժամ: Cholinergics-ները հիմնականում տրում են օժանդակելու առաջիններին, երբ հարկ է լինում յաւելեալ դեղամիջոցի: Mrxthylxanthine յանձնարարում են Beta2 agonist ներ հանդուրժել չկարողող հիւանդներին:

Ձաք. 1

# 2001 ԴՅՅՆ ԿՆՈՒՄՆԻ ԱՆՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՎԵՐԱԳՐՈՒՄ

## Յունար

1. Ամանորի գիշերը Խոր Վիրապում վառած Գրիգոր Լուսատրչի կանթեղի լոյսը տարածեց Հայաստանում ու արտերկրում:

10. Հրաժարական տեց Երեւանի քաղաքապետ Ա. Թազեյանը:

11. Ռ. Նազարեանը նշանակեց Երեւանի քաղաքապետ:

17. Եւրոպայի խորհրդի նախարարների պատիրակների կոմիտեի նիստը միաձայն որոշում կայացրեց Հայաստանի եւ Ադրբեջանի՝ ԵԽ լիիրա անդամակցութեան վերաբերեալ:

18. Ֆրանսիայի Ազգային ժողովը միաձայն ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը:

22. Մ. Աբելեանը ընտրեց ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (UNICEF) նախագահ:

25. Սորասրուրգում կայացաւ ԵԽ-ին Հայաստանի անդամակցութեան հանդիսատար արարողութիւնը:

30. Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակը ստորագրեց Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւը:

## Փետրար

12-16. ՀՀ նախագահը պաշտօնական այց կատարեց Ֆրանսիա:

15. Սկսեց 1999 թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ Ազգային ժողովի դահլիճում տեղի ունեցած ոճրագործութեան դատաքննութիւնը:

20. ՀՀ գլխաւոր դատախազ նշանակեց Ա. Թամազեանը:

26. Լ.Ղ.Հ պաշտպանութեան նախկին նախարար Ս. Բաբայեանը դատապարտեց 14 տարւայ ազատազրկման:

## Մարտ

1-2. Ռ. Քոչարեանի այցը Ռուսիա:

4-5. Փարիզում հանդիպեցին Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներ Քոչարեանը եւ Ալիեւը:

22. ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Սենատը միաձայն որոշեց ապրիլի 24-ը համարել Հայոց ցեղասպանութեան յիշատակի օր:

26. Էջմիածնում տօնեց Վենետիկի հայոց Սյուրբարեան միաբանութեան հիմնադրման 300-ամեակը:

## Ապրիլ

3-6. ԱՄՆ Ֆլորիդա նահանգի Քի Վեսթ քաղաքում կայացան դարաքաղեան կարգաւորման հայադրբեջանական 17-րդ բանակցութիւնները:

19. 33 կազմակերպութիւններ Ազատութեան հրապարակում կազմակերպեցին 10 հազարանոց ցոյց ընդդէմ էլեկտրական բաշխիչ ցանցերի սեփականաշնորհմանը:

21. էլեկտրական բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման տենդերը ձախողեց:

24. Ամբողջ աշխարհի հայերը նշեցին Հայոց ցեղասպանութեան գոհերի յիշատակի 86-րդ տարելիցը:

26-27. Երեւանում տեղի ունեցաւ Հաւաքական անվտանգութեան պայմանագրի մասնակից պետութիւնների անվտանգութեան խորհրդի քարտուղարների յանձնախընթի 2-րդ նիստը:

## Մայիս

2-3. ՀՀ պաշտօնական այց կատարեց Լիբանանի նախագահ, գեներալ Է. Լահուդը:

3. Հայաստանը ընտրվեց ՄԱԿ-ի մարդու իրաւունքների յանձնաժողովի անդամ:

10-12. Նիու Եորքում կայացաւ ՀՀ տնտեսութեան ներդրումներին նվիրված «Հին երկիր, նոր ուղղութիւն» միջազգային խորհրդածողովը:

17. Իրանում վթարի ենթարկեց «Հայկական աիաւտիներին» պատկանող «Եակ-40» ինքնաթիռը:

19. Հայաստանի Գրողների միութեան նախագահ ընտրեց 55-ամեայ արձակագիր Լ. Անանեանը:

23. Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաեւի պաշտօնական այցը Հայաստան:

23. Արտահերթ նիստում ԱԺ-ը հաւանութիւն տեց «Հոկտեմբերի 27-ի» գործով ԱԺ ժամանակաւոր յանձնաժողովի ստեղծմանը:

23. Վաշինգտոնում Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը հանդիպեց ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի հետ:

24-25. Երեւանում տեղի ունեցաւ ԱՊՀ Հաւաքական անվտանգութեան պայմանագրի (ՀԱՊ) անդամ վեց պետութիւնների (Հայաստան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Կիրգիզիա, Տաջիկստան) գագաթածողովը:

26. Բելառուսի նախագահ Ա. Լուկաշենկոյի պաշտօնական այցը Հայաստան:

28. «Միկան» երկրորդ տարին անընդմէջ դարձաւ Հայաստանի ֆուտբոլի գաւաթակիր:

29. Երեւանում բացվեց Անդրէյ Սախարովի յուշարձանը:

30. Հայկական վճարային միջոցի՝ «Արմենիան քարդի» (ArCa) շնորհանդէտը:

## Յունիս

2. ՀՀ կառավարութիւնը հաւանութիւն տեց աղետի գօտու վերականգնման համալիր ծրագրին:

5-9. Ռ. Քոչարեանի պաշտօնական այցը Բելգիա:

12. ԱԺ-ը հաւանութիւն տեց հանրապետութեան նախագահի առաջարկին՝ քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակի կապակցութեամբ Հայաստանում համաներում յայտարարելու մասին:

19-21. Բաքում կայացաւ Մեծովեան տնտեսական համագործակցութեան խորհրդարանական համաժողովի հերթական նիստը, որին մասնակցեց ՀՀ պատիրակութիւնը:

21-22. Երեւանում կայացաւ ԱՊՀ երկրների ՆԳ նախարարների խորհրդի հերթական նիստը: Նիստին մասնակցեցին 12 պետութիւնների, այդ թում նաեւ Ադրբեջանի, ՆԳ-ն ղեկաւարները:

## Յուլիս

2-4. Ստեփանակերտում անցկացեց Լեռնային Ղարաբաղի, Արխազիայի, Հարաւային Օսիայի եւ

Մերձդնեստրի արտգործնախարարների խորհրդակցությունը:

19. ՀՀ նախագահը ԱԺ ղեկավարությունը եւ ֆրակցիաների, խմբերի ու մշտական կոմիտեների նախագահներին ներկայացրեց սահմանադրական վերափոխումների վերջնական տարբերակը:

23. «Կայունություն» պատգամատրական խումբը վերանանեց «Ազրոարդիւնաբերական ժողովրդական միատրում»:

**Օգոստոս**

7-11. Հայաստանում անցկացրեցին հայ-ռուսական համատեղ զինավարժություններ:

16. Նախագահ Քոչարեանը ստորագրեց «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագիրը»:

18-26. Երեւանում անցկացրեցին համահայկական երկրորդ խաղերը, մասնակցեցին շուրջ 3000 մարզիկներ աշխարհի 32 երկրի 95 քաղաքներից:

21. Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն տօնեց ծննդեան 50-ամեակը:

23. Կեանքից հեռացաւ ակադեմիկոս Լ. Սկրտչեանը:

30. Նախագահ Քոչարեանը դարձաւ 47 տարեկան:

**Սեպտեմբեր**

1. «Արմենտել» ՀՁ ՓԲԸ-ն Հայաստանում ներքաղաքային հեռախօսներից օգուելու համար բուպեւարձ սահմանեց:

3. Արցախում սկսեցին ԼՂՀ հռչակման 10-ամեակի տօնակատարությունները:

5. ԼՂՀ-ում տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները:

6. ՀՀ վարչապետ Ա. Մարգարեանը յանձնարարեց տրանսպորտի ու կապի նախարարութեանը արգելել բուպեւարձարի կիրառումը:

Հայաստանի պղնձահանքերի օգտագործումը տրեց շվեյցարական «Մանես եւ Վալբերս» ընկերութեանը:

8. ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակեց տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդիւնքները: Ստեփանակերտի քաղաքագլուխ ընտրեց Հ. Ավանեսեանը:

9-12. Հայաստան այցելեց Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ լորդ Ռ. Ջոնսթոնը:

12. Նախագահ Քոչարեանը յայտնեց իր ցաւակցութիւնը նախագահ Ջ. Բուշին՝ սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում կատարած ահաբեկչական գործողությունների վերաբերեալ:

14-16. Հայաստան պաշտօնական այց կատարեց Ռ.Ռ. նախագահ Վ. Պուտինը:

21. ՀՀ-ն տօնեց անկախութեան 10-ամեակը:

22-24. Ռուս ուղղափառ եկեղեցու առաջնորդ Ալեքսի Երկրորդի այցը Հայաստան:

23. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու բացման հանդիսատր արարողութիւնը:

25-27. Քրիստոնէութեան ընդունման 1700-ամեակի տօնակատարություններին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանեց Հռոմի պապ Յովհաննէս Պողոս Երկրորդը:

**Հոկտեմբեր**

7. Չեչեն գրոհայինները գնդակահարեցին Աբխազիայի հայկական Նաս գիւղի 14 խաղաղ բնակչի:

10-19. Հայաստանում անցկացրեց մարդասահմար:

12-20. Երեւանում անցկացվեց շախմատի աշխարհի քիմային առաջնութիւնը:

23-24.Երեւան պաշտօնական այց կատարեց Վրաստանի նախագահ Էդարդ Շեւարճնաձեն:

31. Պաշտօնական այցով Երեւան ժամանեց Ռումինիայի նախագահ Ի. Իլիեսկուն:

**Նոյեմբեր**

1. Երեւանում մեկնարկեց ուշուի աշխարհի առաջնութիւնը:

14-16. Պաշտօնական այցով Հայաստան ժամանեց Լեհաստանի նախագահ Ա. Կվաշնեւսկին:

19.Պաշտօնական այցով Երեւան ժամանեց ԵՌԽԵՄԿՕ-ի գլխաւոր տնօրէն Կոնչիրո Մացուրան:

29-30. Մոսկվայում տեղի ունեցան ԱՊՀ 10-ամեակին նւիրած ԱՊՀ անդամ երկրների ղեկավարների, վարչապետների եւ արտգործնախարարների խորհուրդների նիստերը:

**Դեկտեմբեր**

7. Նշեց Սպիտակի երկրաշարժի 13-ամեայ տարելիցը:

8. Յայտնի ռեժիսոր Ա. Եղոյեանը ժամանեց Երեւան՝ իր նոր ֆիլմի մի հատածը նկարահանելու:

11. Երեւանի Շ. Ազնաւորի անուն հրապարակում նշեցին սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում ահաբեկչութեան գոհ դարձած նահատակների յիշատակը:

12. «Թուրք-հայկական հաշտեցման յանձնաժողովի» հայ մասնակիցները հրաժարեցին մասնակցութիւնից:

14. Նախագահ Ռ. Քոչարեանի եւ ՀՀ արդիւնաբերութեան ու առեւտրի նախարար Կ. Շշմարիտեանի համատեղ ատուիսում տեղեկացրեց 2001 թ. ընթացքում Հայաստանում նոր 44048 աշխատատեղ ստեղծելու մասին:

15. ԱՄՆ պաշտպանութեան նախարար Գ. Ռամսֆելդը կարճատեւ այց կատարեց Երեւան: Քննարկեցին միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարը, «Գործակցութիւն հանուն խաղաղութեան» ՆԱՏՕ-ի ծրագրում Հայաստանի մասնակցութեան ընդլայնումը եւ ռազմական ոլորտում համագործակցութեան հարցեր:

17-18. Հայաստանի նախագահը երկօրեայ պաշտօնական այց կատարեց Մոսկւա:

19-22. Ռ. Քոչարեանը մեկնեց Տոկիո, որտեղ հանդիպումներ ունեցաւ կայսր Ակիհիտոյի եւ վարչապետ Չիւնիտիլո Կոիձումիի հետ:

21. Հունահռոմեական ըմբշամարտի աշխարհի չեմպիոն Վ. Գալստեանը ճանաչեց ՀՀ 2001 թ. լաւագոյն մարզիկ:

25. ԼՂՀ նախագահ Ա. Գուկասեանի հրամանագրով Հայաստանում ԼՂՀ նոր մշտական ներկայացուցիչ նշանակեց Ա. Մելիքեանը:

25-27. Հայաստանի նախագահը պաշտօնական այցով մեկնեց Իրան:

*ՍՈՒՐԷՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ, Քաղաքական եւ տարածաշրջանային հետազոտութիւնների կենտրոն*

# Էջեր մարզաձեւերի պատմութիւնից

## Ձեռքի գնդակ

Գերմանական գիմնազիայի դասատու Խայգերը ստեղծել է նոր խաղ, յատուկ գիմնազիայի աշակերտուհիների համար: Սակայն այն երկար ժամանակ համարում էր զուտ կանացի եւ դա էր պատճառը, որ 1930 թականին Պարագայում անցկացւած աշխարհի առաջնութեանը թոյլատրուեց մասնակցելու միայն կանանց թիմերին:

Գրութիւնը փրկեց պատահականութիւնը. զինտրների ինքնագագոցողութիւնը բարձրացնելու համար որոշել էին անցկացնել Ֆուտբոլի ամենօրեայ մարզումներ, սակայն այն բանից յետոյ, երբ հիւանդանոցում զգալի կերպով աւելացաւ կտորածք ունեցող հիւանդների թիւը, ղեկավարութիւնը վերանայեց մարզումների խաղացանկը՝ Ֆուտբոլը փոխարինեց ձեռքի գնդակով: Այսպէս նոր խաղը սկսեց աստիճանաբար տարածուել նաեւ տղամարդկանց մէջ:

Տասնմէկ խաղացողներով ձեռքի գնդակը շատ արագ զարգացաւ, որ թէեւ երկար տարիների ընթացքում, նրա օրէնքները բազմիցս փոփոխուում էին, սակայն անփոփոխ մնաց մի բան. Ֆուտբոլի դաշտում երկու թիմ (ուրաքանչիւրում տասնմէկ մարդ) կլոր գնդակը գցում էին Ֆուտբոլի դարպասը:

Նոր խաղը մեծ մասայականութիւն վայելեց յատկապէս կենտրոնական Եւրոպայում, իսկ Սկանդինաւիայում նրա «բախտը» չբերեց: Հանգիստ խառնուածքի տէր սկանդինացիները չէին սիրում աղմկոտ խաղեր, իսկ քսաներկու մարդ՝ այսպէս թէ այնպէս բաւականին աղմկոտ ամբոխ է: Ահա եւ Հիւսիսային Եւրոպայում ձեռքի գնդակը սկսեց աստիճանաբար տեղափոխւել դահլիճները: Գահլիճում, ինչ խօսք տարածութիւնը սահմանափակ էր, ուստի սկսեցին խրաքանչիւր թիմում խաղալ ոչ թէ տասնմէկ, այլ եօթ մարդիկ, իսկ դարպասները աւելի փոքրացեցին: Բանից պարզեց, որ ձեռքի գնդակի կրտսեր եղբայրը՝ 7:7-ը, աւելի արագաշարժ է եւ աւելի խորամանկ իր աւագ եղբորից: Իսկ երբ պարզեց, որ կրտսեր եղբայրը տասը տարով մեծ է աւագ եղբորից (եօթ խաղացողներով խաղը ստեղծել է դեռ 1898 թականին դանիացի Նիլսենի կողմից), ձեռքի գնդակ 11:11-ը ստիպւած եղաւ անցնելու «թոշակի»:

Իսկ ինչ է ձեռքի գնդակը: Գ-ա կտրուկ հակազրոհ է, դրամատիկական ճակատամարտ. ճամատամարտ, որը չի դադարում եւ ոչ մի ակնթարթ: Խաղ, որը թոյլ չի տալիս հանգիստ շունչ քաշելու ոչ խաղացողներին եւ ոչ էլ հանդիսատեսին: Գ-ա խաղացողների անառիկ պատ է, որը մի ամբողջական աչք դարձած, ձեռքերի բազմաձեւ շարժումներով ճգնում է փշրել մրցակցի կազմակերպած գրոհը, եւ անցնելու կայծակնային հակազրոհի: Եւ եթէ Ֆուտբոլասերը երբեմն կարող է խաղադաշտից հեռանալ հիասթափուած, չտեսնելով դարպասի եւ ոչ մի գրաւում,


ապա ձեռնագնդորդների հանդիպումներում նման դէպքեր չեն պատահում:

1986 թականին ձեռքի գնդակն անգամ «օլիմպիական քաղաքացիութիւն» ձեռք բերեց, սակայն այդ մրցաշարը եղաւ նաեւ վերջինը: Միայն միւնխենեան օլիմպիադայում, մտահոլացումների այդ բազմահարուստ շղթան կրկին դուրս եկաւ Օլիմպոսի ստորոտ: Յիշեցնենք, որ առաջին երեք դափնիները իրենց հետ տուն տարան Լեհաստանի, Յունգարիայի, Սովետական Միութեան ու Գերմանիային Գեմոկրատական Հանրապետութեան մարզիկները: ■

## Ստացւած Գրականութիւն

1. «Իքնութեան խճանկար», Զայր Լևոն Զէքիեան, Բեյրութ, 2001.156 էջ:
2. «Իրական դէպքեր», Աստղիկ Բաբայեան, Երևան 2001, 168 էջ:
3. Քաղաքացիական կրթութիւն, Արմէնուհի Յովհաննիսեան, Մելանեա Դաւթեան, Երևան 1999, 136 էջ:
4. «Ապագա» եռամսեայ հանդէս, համար 5-6 (20-21) 2001 թ. ամառ:
5. «Կանչ» շաբաթաթերթ, Բեյրութ:
6. «Նոր Զորիզոն», Շւեդիա, 2001-2 և 3:
7. «Սուրհանդակ», Թեհրան, 2001, Յուլիս-Օգոստոս:
8. «Զայեացք», Մելքոնեան հաստատութեան պաշտօնաթերթ, համար 12,13,14, Մարտ, Յունիս« Նոյեմբեր 2001:
9. «Զանդէս Գրականութեան և Արւեստի» Թեհրան, Զամար 1, 2001 Դեկտեմբեր:

## ԷճՈՒ Զ յ յՅՈՒ Զ ԶՅՈՒ Զ ՆՅՈՒ 5-6



# Խոհարարական հնարամտություններ



Եփելու կամ շոգեխաշելու ժամանակ, որպեսզի պահպանի ճակնդեղի գոյնը, անհրաժեշտ է ջրին ատելացնել մի քիչ քացախ, լիմոնաթթու, լիմոնի հիւք կամ թթած կլաս:

☆☆☆

Վինեգրետի (խառնախորտիկ) համար եփած ճակնդեղին առանձին հարկատր է լցնել իւղ, որպեսզի միւս բանջարեղենները չզուճաւորեն նրա հիւքից:

☆☆☆

Սալաթի համար մաքրած եւ կտրտած խնձորները չեն սեւանում, եթէ նրանց 10 րոպէ դնէք թեթեակի աղ արած սառը ջրում:

☆☆☆

Եթէ սալաթին, պատրաստելուց անմիջապէս յետոյ, ատելացի մի կաթիլ լիմոնի հիւք կամ քացախ, ապա նրա մէջ երկար կը պահպանի C վիտամինը:

☆☆☆

Մաղադանոսը (netrywka)կը պահպանի իր բոյրը, եթէ նրան լանաք ոչ թէ սառը, այլ գոլ ջրով:

☆☆☆

## Յաղթողները եւ պարտուողները

**Ս.Ջ. Շարիս**

### Թարգմանեց Փազիկ Անդրեասեանը

Յաղթողն լսում է:

Պարտուողը միայն սպասում է իր խօսելու հերթին:

☆☆☆

Յաղթողը իր հաւասարակշռութիւնից ու ճկունութիւնից հզորութիւն է զգում:

Պարտուողը երբէք հաւասարակշռւած ու չափաւոր չէ, երբեմն տկարութեան դիրքերից եւ երբեմն էլ որպէս ստորադաս ճնշողի նման է վարում:

☆☆☆

Յաղթողն ասում է՝ «Պիտի ատելի լաւ ճանապարհ էլ գոյութիւն ունենայ»:

Պարտուողն ասում է՝ «Քանի եղել է հէնց այսպէս է եղել եւ քանի լինի հէնց այսպէս էլ կը լինի»:

☆☆☆

Յաղթողը յարգում է իրենից ատելի բարձր անհատներին եւ աշխատում է որեւէ մի բան սովորել նրանցից:

Պարտուողն ատում է իրենից ատելի բարձր անհատներին եւ որոնում է նրանց թոյլ կէտերը:

☆☆☆

Յաղթողը չափաւոր է քայլում:

Պարտուողը կամ շատ արագ եւ կամ էլ շատ դանդաղ է քայլում:

☆☆☆

Յաղթողն իմանում է թէ երբեմն յաղթութիւնը շատ քանկ գնով է ձեռք բերում:

Պարտուողը շատ է տենչում յաղթութեան, այնպէս, որ ոչ կարող է յաղթել եւ ոչ էլ պահպանել այն:

☆☆☆



## Հումոր

Ինստիտում քննութիւններ են: Դասախօսը հարցնում է:

-Ի՞նչ է քո կարծիքով քննութիւնը:

Ուսանող.

-Դա գրոյց է երկու խելօք մարդկանց միջոյ:

Դասախօս

-Ի՞նչ եթէ նրանցից մէկը հիմար է:

Ուսանող.

-Ուրեմն միւս թոշակից կը գրկի:

☆☆☆

Կատուն բռնում է մկանը:

-Ապրել ուզո՞ւմ ես:

-Իսկ ո՞ւմ հետ:

-Այ, քեզ փչացած, ուտելս էլ չի գալիս:

☆☆☆

Ջրուցում են երկու ճանապարհորդ մաքսային ստուգումից յետոյ:

-Չեզ մօտ ինչ- որ բան գտա՞ն:

-Այո, ակնոցներ: Երկու օր է չէի կարողանում գտնել դրանք:

☆☆☆

Ականջներիս չեմ հաւատում, ինձ ասացին, որ դու նապաստակ ես կերել, չէ՞ որ դու միս բոլորովին չես ուտում:

-Դա վրեժ է՞ր, նա կերել էր իմ կաղամբը:

☆☆☆

-Ինչո՞ւ է ասանակի աչքերը միշտ տխուր:

-Որովհետեւ նրա ամուսինը էլ է:

☆☆☆

Երիտասարդ ուսուցչուհին գրատախտակին խնձոր է նկարում եւ հարցնում աշակերտներին.

-Ի՞նչ եմ նկարել:

Բոլորը միասին:

-Հետոյք:

Ուսուցչուհին լացակումած դուրս է գալիս դասարանից: Մի քանի րոպէից դասարան է մտնում դպրոցի տնօրէնը եւ բղաւում:

Ինչո՞ւ էք դուք ուսուցչուհուն այդ վիճակի հասցրել: Իսկ այս ի՞նչ հետոյք է գրատախտակին նկարած:

☆☆☆

«Նորթուսը» մէկնում է Աւստրալիս եւ կենդուրու տեսնելու քացականչում է:

-Ինչը ճիշտ է՝ ճիշտ է,- խոստովանում է նա,- ձեր մորեխները մերից մեծ են:

☆☆☆

-Էլի ոչի՞նչ,- ասաց փեսան, այն բանից յետոյ, երբ քարը նետելով շան վրայ, դիպաւ գոքանչին:

# Ինչպես են առաջացել այս տեղանունները

Կամար Աւետիսեան

## Քհարատա-Հնդկաստան

Հնդկաստանը աշխարհի խոշորագոյն երկրներից է, որը գտնուում է Հարավային Ասիայում: Այս երկրի անունը սանսկրիտերէն Քհարատան է, որը առաջացել է հնդիկների ասանդական նախահօր անունից: Հնդկաստանի կառավարութիւնը ի յիշատակ դրան, հանրապետութեան համար այդ անունը թողել է որպէս դասական անանում: Երկրի հանրածանօթ եւ գործածական անունը մնում է Հնդկաստան, որի առաջացման պատմութիւնն այսպիսին է:



Ինչպէս գիտենք, Հնդկաստանը յայտնի է երկու նշանատու գետերով՝ Ինդոսով եւ Գանգեսով: Ի դէպ, Ինդոսը ներկայումս մնում է Պակիստանի սահմաններում: Ինդոսը հոսում է Հնդկաստանի հիւսիս-որեւմտեան մասով, այն վայրերով, որտեղով երկիրը կապ էր պահպանել Առաջաւոր Ասիայի երկրների, յատկապէս Պարսկաստանի հետ: Հետագայում, պարսիկները այդ տեղով հոսող գետի՝ Ինդոսի անունով երկիրը Հնդկաստան անանեցին: Պարսիկներից էլ այդ անունը անցաւ այլ ժողովուրդների, այդ թւում նաեւ հայերին:

Ի դէպ, Ինդոս գետի անունը ծագել է «Սինդիոս» բառից, որը սանսկրիտերէնում «ջուր» նշանակում (հոսող ջրի իմաստով):

Սկզբնական շրջանում Հինդուստան (Հնդկաստան) անունը տարածում էր այն երկրի վրայ, որն ընկած էր Ինդոս գետի ստորին հոսանքում: Աստիճանաբար այդ անունը Ինդոսի աւազանից տարածեց Գանգեսի դաշտավայրի վրայ: Ի դէպ, այդ ժամանակ թերակղզային Հնդկաստանը կոչւում էր Գեկան, որը նշանակում է «հարաւ» կամ «աջ կողմը ընկած երկիր»:

Արժի յիշել, որ միջնադարեան աշխարհագրագետները Հնդկաստան ասելով հասկանում էին ընդհանրապէս Արաբիայից արեւելք ընկած՝ Հարաւ-Արեւելեան, այսպէս կոչւած, Մուսոմային Ասիայի երկրները: Այդ մօտեցումը իր արձագանքն է գտել աշխարհագրական շատ անուններում, ինչպէս օրինակ, Հնդկաստանից արեւելք ընկած թերակղզին կոչւում է «Հնդկաչին», իսկ նրանից հարաւ-արեւելք ընկած կղզիների աշխարհը «Ինդոնեզիա», որը բառացի «կղզիների Հնդկաստան» է նշանակում: Հետեւապէս Կոլումբոսի ժամանակների Հնդկաստանը անելի լայն հասկացողութիւն էր, քան այժմեան Հնդկաստանը:

Իսկ երբ կատարեց Ամերիկայի գիտը, անելի հետաքրքիր բան տեղի ունեցաւ՝ հանդէս եկաւ մի նոր

Հնդկաստան եւ: Առաջինը, արդէն բուն Հնդկաստանն էր, իսկ այս միւսը՝ Հիւսիսային եւ Հայաւային Ամերիկաների միջեւ տարածող կղզիների աշխարհը, որն ստացաւ Վեստ-Ինդիա («Արեւմտեան Հնդկաստան») անունը: Այդ վերջինը Քրիստափոր Կոլումբոսի ուշագրաւ սխալի հետեւանքն էր:

Բայց երբ պարզեց, որ դա Կոլումբոսի սխալն է, այսպէս ասած «ամերիկեան» Հնդկաստանը միւսից՝ «ասիականից» տարբերելու համար առաջինի սկզբում անելացրին «Վեստ» (արեւմուտք) բառը եւ ստացեց «Արեւմտեան Հնդկաստան» կամ ինչպէս պաշտօնապէս ընդունւած է ասել, Վեստ-Ինդիա: Իսկ երկրորդին, որի սկզբում երկար ժամանակ անելացնում էին «Օստ» (արեւք) բառը եւ կոչւում Օստ-Ինդիա, ժամանակի ընթացքում ուղղակի Հնդկաստան անանեցին:

## Հայաստան, Հայք եւ Արմենիա

Նախ «Հայաստան» անան մասին:

Հայաստան հայ ժողովրդի հայրենիքի անունն է, ուր ընթացել է նրա պատմական կեանքը: Նրա սահմանները համընկնում են Հայկական բարձրավանդակի սահմանների հետ: Այժմեան Հայաստանի Հանրապետութիւնը գրաւում է այդ բարձրավանդակի հիւսիս-արեւելեան մասը:

Հայաստան անան առաջացման մասին գոյություն ունեւայ աւանդական եւ էթնիկական ստուգաբանութիւններ:

Առաջին մեկնութիւնը տալիս է պատմահայր Մովսէս Խորենացին: Նա աշխարհագրական շատ անուններ համադրում կամ զուգակցում է մեր նահապետների անան հետ: Ի դէպ, աւանդական պատմութիւնից ժառանգած այս փաստը ինքնին շատ կարեւոր երեւոյթ է, որովհետեւ տոհմի կամ ցեղի նախահայրը խորհրդանշում է ոչ միայն խմբային ընդհանրութիւն, այլեւ ազգային պատմութեան խորհրդանշն է: Մեր նախահայրը համարում է Հայկ Նահապետը, որի անունից էլ իբր ծագել է մեր ժողովրդի եւ երկրի անունը: Գ-ա կապւած է մեր նշանատու աւանդակէլի հետ, ըստ որի ասորեստանցի հսկայ Բելի բռնութիւնից հեռանում են բազմաթիւ ցեղեր, դրանց հետ էլ մեր ժողովուրդը՝ իր նահապետը Հայկի գլխատրութեամբ: Նա գալիս է մի բարձրադիր, գովաստու ու ջրառատ երկիր եւ այդտեղ հաստատում: Բելը պատգամ է ուղարկում Հայկի մօտ, յայտնում, որ նախգուր է գնացել այդ ցուրտ լեռնաշխարհում բնակութիւն հաստատելու, եւ խորհրորդ է տալիս վերադառնալ: Հայկը խիստ պատասխանելով պատգամատրին՝ ետ է դարձնում Բարելուն: Բելը, Հայկի պատասխանից զայրացած, մեծ զօրքով գալիս է Հայկի վրայ: Վանա լճի մօտ, հետագայում Հայոց ձոր կոչող վայրում, հակառակորդները հանդիպում են, եւ Հայկը մեծամարտի է դուրս գալիս Բելի դէմ: Նետի մի հարածով ցած է գլորում նրան եւ ցրիւ տալիս Բելի բանակը: Հայկը բնակութիւն է հաստատում այդ բարձրաւանդակում եւ նրա անունով կոչւում է ժողովուրդը, իսկ ժողովրդի անունով՝ երկիրը:

Ճար.1